



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

28
Q-44

3145

Ամերիկական պուրակ

1838



Օպերացիոն եղթոց
Շքաղյա ժահաց Ռէժիսուր.

Առաջ հայ գլուխ Բժշ-
կա մատուց սպիտ ընդունած
ԲԺ Թ:

Ինչու ամենայ բայ յանդ-
կան ի մատուց մասնաւուն:

Ա. Ա. Դ. Խաչաղելու

15- 8- 94. -
մաթիս: - Բ 2001

38

Ա-ԿԿ

Ամերիկան

ԿՐՈՆԻ

ՀՅՈՒՐԵՐ ԵԿ ՄԱՆՐ ՀԱԼԱՏԱԾ ՀԵՆ ԵԿ
ՆԱՐ ԱԽԵՑՔ ԵԿԵԴԵՑԻԱՅ:

Համատաքանչ

Ա. Ա. Բ. ԱՎԵԼԱՆԻՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐԵՎԵՆԻ ՔԱՂԱՔԱՅԻ ԵԿ ՕՐԻԱ-
ԴԻԱԿԱՆ ԴՐՈՅՑԵՐԻ ԱՏՈՐԻ ԴԱՎԱՏԱՆԻ
ՀԱՅ ՄԱՆԱԿԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

280
687-ԱՀ

ԱՊՐԵԼԻ 1888

ՀՐԱՄԱ ՄԱՆՐ ԿԱՐԱԳԻԿԻ ԵՀՄԱՆԱ

1888-թ. 61. 6

Հ 8
Ա-44 48

ՆԱԽԱԴՈՒՅՆ

ԿՐՈՆԻ

ՃԵՄԱՐԻՏ ԵՒ ՍՈՒՐԲ ՀԱԽԱՏՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ
ՈՒԽՏԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ :

Համապատասխան

Ս. Ա. Ք. ՇՊԱԶԱՆԵԱՆ

(1007
31355)

ԱՐԳՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԵՒ ՕԲԻՈՐԴԱԿԱՆ
ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍՏՈՐԻՆ ԴԱՍՏԵԱՆՑ ՀԱՅ
ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

ՎԱՐԱՐԱՊԵՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱՆՆԻ

1887—Ո.ՑԼ.Ե



ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՍՐԲԱՁՆԱՍՈՒՐԲ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

30 009 - Կ. հ.

12454-58

Որդիական երախտագիտութեան նույն
ամենախոնարհ պատկառանօք լնծայաբերէ

Հայոցագույն:

ՅԱՄԱԶԱԲԱՆ

Մեր Ս. եկեղեցւց առաջին ճարտարապետն է Աստուծոյ Միածին Որդին Յիսուս Քրիստոս, Նա քանի որ աշխարհիս վրայ էր, քարողեց իւր վարդապետութիւնը և սովորեցրուց Աստուծոյ ընտրեալ ժողովրդին (Խրայելացւոց) Աստուծոյ կամքը, Հաւատը և փրկութեան Ճանապարհը, յայտնելով՝ որ ինքը եկել է մարդկային ազգի փրկութեան, և մարդաբների կանխասացութիւնները կատարելու համար։ Նա հիմնեց նոր եկեղեցի և նոր կրօն, զոր չընդունեցին Խրայելացիները, բայց այս եկեղեցին տարածուեցաւ հիմնուների մեջ և Հրեից ազգից էլ շատերը Հաւատացին նրան։

Յայտնի է մեզ նոր կտակարանից, որ Քրիստոսի համբարձմանից յետ, Առաքեալները իրանց քարոզութեամբ կարողացան հալածել կոսպաշտութեան խաւարը, և տարածել քրիստոնէական Հաւատը ամեն տեղ, հիմնելով նոր ուխտի եկեղեցին։ Թէ՛ առաքելոց ժամանակ, և թէ՛ նրանցից յետոյ դուրս եկան հերձուածողներ և հերէտիկոսներ, որոնք նոր ազնուներ և նոր վարդապետութիւններ էին ուսուցաւմ Հակառակ Քրիստոսի վար, ազնութեան,

Սակայն, և որ՝ 8էնէլէպէն, և է որ՝ Աղջային ժողովներով գատապարտեցին սուրբ Հայրերն աղանդաւորներին, և Աստուածաբան վարդապետներն զրեցին նրանց սիալ վարդապետութեանց դէմ։ Այն ժամանակներում թէ ի՞նչպէս էին սովորեցնում աշակերտներին կամ ժողովրդեան՝ քրիստոնէական հաւատը և կրօնը, թողնելով միւս քրիստոնեայ աղդերինը՝ մի հայեացք ձգենք Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ կրօնուսուցութեան վրայ։

Հայոց պատմութիւնը յայտնի ցոյց է տալիս, որ Հայերս չունէինը ուսումնարաններ, առաջին երեք դարում, որովհետեւ Արքար թագաւորի մահուանից յետ, կրկին տիրեց կուպաշտութիւնը, և քրիստոնէութիւնը շատ ծածուկ էին պաշտում։ Հաւատացեալները կուպաշտ թագաւորների երկիւղից, մինչի սուրբ Գրիգոր Լուսաւորիչը, որ չորրորդ դարի սկզբումը լուսաւորեց Հայաստան աշխարհը քրիստոնէական սուրբ Հաւատոյ լուսով։ և տարածեց Ճշմարիտ Աստուածգիտութեան լոյսը և կրօնը, հիմն ունելու սուրբ Աւետարանը, որ բզիսած է Աստուածանից։ — Բայց երբ հինգերորդ դարում Ս. Մեսրոպ սուրբ Հոդուց աղդեցութեամբ դտաւ Հայոց գիրը և թարգմանեց իւր ընկերների հետ Աստուածաշունչը, այն ժամանակ բացուեցան ուսումնար սններ Հայաստան երկրում, նրանց զլիաւ որ ուսումն էր կրօնը, և Տե-

մըն էր Աստուածաշունչը, մեկնելով և համառօտենով ուղղափառ վարդապետութեամբ։

Եւ այսպէս շարունակարար մեր սուրբ Հայրերն սկսեցին համառօտել և տպագրել մեր եկեղեցւոյ ուղղափառութիւնը, Քրիստոնէական վարդապետութիւն կամ Կրօնագիտութիւն անուն տալով, նշյապէս և այլ կրօնոկան գրքեր, և ցրուեցին հայաբնակ քաղաքների, գիւղերի և վանքերի Դպրոցներում, և այնուհետև կրօնագիտութիւնը համարուեցաւ գասատուութեան ամենոհարկաւոր առարկայ։

Ես ևս իմ տկար կարողութեան չափ համառօտենով և Նախագուռն Կրօնի, ձեռնարկս՝ տալիս եմ Հայ մանուկների ձեռքը, ընթերցողը սրա մէջ ամփոփած կը գտնի ինչ որ քրիստոնեայի համար ամենակարեօրն է գիտենալ։ Հին և Նոր կտակարանից և Ս. Եկեղեցւոյ կանոններից հաստատ համոզուած եմք՝ որ քրիստոնէական ուսումը հիմնուած պիտի լինի Սուրբ Գրքի վրայ, պատճառ որ՝ քրիստոնէական հաւատոյ հիմն է Աստուածաշունչը, իսկ Աստուածաբան Վարդապետների աշխատութիւններն են՝ շինուածներ այդ հիման վրայ, աւելի պարզ հասկանալու համար։

Նուասոր պաշտօնեայ
ՍԱՐԳԻՍ ԱՏԵԳ ՔՀ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ.

ՆԵԽԵՐԴՈՒՌ

ԿՐՈՆԻ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒՏՈՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՄԱՍՆ Ա.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ

1.

Ա.ՍՏՈՒԱԾ

Սուրբ Գիրքը մարդկանց սովորեցնում է
որ Աստուած ամենապարզ Հոգի և ամենա-
կատարեալ էակ է, նա ոչ մարմին ունի, ոչ
կերպարանք, ոչ ձեւ, ոչ գոյն; Նրա կատա-
րելութեանց գլխաւորներն են, մի, սուրբ,

անսկիզբն, անվախճան, յաւիտենական, ամենակարող, անփոփոխ, ամենագետ, ամենակալ, արարիչ, ամենուրեք, նախախնամող ելն:

Աստուծոյ այս բոլոր կատարելութիւններ ունենալը նրանով ենք իմանում, որ երբ երկնքի ու երկրի գեղեցիկ զարդերն տեսնում և մարդուս կատարելութիւնները քննում ենք, իսկոյն գալիս ենք այն եղակացսւթեան, որ սրանց ամենին մի ստեղծող պէտք է լինի և կայ, որին անուանում ենք Արարիչ, Ստեղծող, Տէր, Տէր Աստուծ, Ամենակալ, Տէր զօրութեանց, Հայր, Թագաւոր, Դատաւոր, Իշխան և այլն:

Օրինակ, ասել թէ՝ այս տունը ինքն իրանից է շինուած, անմտութիւն է, աւելի մեծ անմոռութիւն և կատարեալ տխմարութիւն է, կարծել թէ՝ այս հրաշալի կարգաւորութեամբ ստեղծուած աշխարհը՝ կամ գիպուածով է եղած, և կամ այլ աստուածներից է ստեղծուած:

2.

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ.

Աստուած էութեամբ մի է, բայց անձնաւորութեամբ բաժանվումէ երեք, Հայր, Որդի և Սուրբ Հոգի. երեքն ևս մի և նոյն յատկութիւններն ունին, և միայն նրանով են զանազանվում միմեանցից, որ Հայրը՝ Որդի չէ և ոչ Հոգի, Որդին՝ Հայր չէ և ոչ Հոգի, և Հոգին՝ ոչ Հայր է և ոչ Որդի, այս երեք անձինք մի Աստուածութեան մէջ են: Առաջին անձը կոչվում է Հայր, որովհետե ծնել է Որդուն ի յաւիտենից յիւրմէ էութենէ: Եկրորդ անձը կոչվումէ Որդի, որովհետե ծնուած է Հօրից անժամանակ, որպէս բան ի մտաց և լոյս ի լուսոյ: Երրորդ անձը կոչվումէ Սուրբ Հոգի, որովհետե միշտ անսկզբնաբար և անհատաբար բջիխումէ Հօր Աստուածուց: Սրանք երեքն ևս ունին՝ համաշաւասար մի բնութիւն, մի Աստուածութիւն, մի կամք, մի զօրութիւն, մի աէրսւթիւն, և մը իշխանութիւն.

նրանց մէջ մեծ և փոքր չը կայ, այլ երեքն
էլ համահաւասար են, ումեր մտքին անհա-
սանելի և անքննելի է Ս. Երրորդութեան
Խորհուրդը:

3.

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ:

Աստուած ճանաչումենք իւր արարած-
ներով—երկնքի ու երկրի՝ մէջ եղած բանե-
րով, որոնք են՝ հրեշտակներ, մարդիկ,
արեւ, լուսին, աստղեր, բոյսեր, կենդանի-
ներ, ջուր, հող օդ, կրակ և այլ ամեն
բան.

Այս ամենը Աստուած ստեղծեց իւր ամե-
նակարող խօսքով, երբ կամեցաւ. «Ասաց և
եղեն»: Մեղանից վեց եօթ հազար՝ կամ
տելի տարիներ առաջ՝ սրանցից ոչ մէկն էլ
չկար, միայն կար և կայ մի Աստուած—Հայր,
Որդի և սուրբ Հոգի:

Աստուած ինքն իւր մէջ էր, ինչպէս ոք

ամեն բան էլ նրա մէջ և նրանից են ստեղ-
ծուած՝ նա աշխարհս ստեղծեց իւր փառ-
քի համար, որ իւր արարածները իրան ճա-
նաչեն, սիրեն և պաշտեն:

Աստուած ստեղծեց աշխարհս վեց օրուայ
մէջ, մեղ կարգ և կանոն ցոյց տալու հա-
մար, և եթէ կամենար մի րոպէտմն էլ
կարող էր ստեղծել, որովհետեւ ամենակա-
րող է:

4.

ԴԱՐՁԵԱԼ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ:

Արարից Աստուածը այսպէս ստեղծեց աշ-
խարհս որ առաջ, խաւար, մութն և անշեն
էր, ջուրը պատած էր բոլոր երկրիս երե-
սը, ու Աստուածոյ Հոգին շրջում էր ջրերի
վրայ, ինչպէս որ պատմումէ Ս. Գիրքը:

Առաջին օրը Աստուած ստեղծեց հրեշ-
տակները և լոյսը, և սկսուեցաւ գիշերն ու
ցերեկը:

Երկրորդ օրը Աստուած ստեղծեց հաստատութիւնը կամ ջրային կամարը և կոչեց երկինք:

Երրորդ օրը Աստուած բաժանեց ջուրը ցամաքից, և գետնի երեսը ծածկուեցաւ զանազան պտղատու և անպտուղ ծառերով, բանջարեղջններով, ծաղիկներով և խոտերով, իսկ ջրերից կազմուեցան ծովեր, լճեր, գետեր և աղբիւրներ:

Չորրորդ օրը Աստուած ստեղծեց արեգակը, լուսինը և աստղերը. որոնցով որոշեցաւ ժամանակ—տարի, ամիս, օր, ժամ:

Հինգերորդ օրը Աստուած լցրեց ջրերը ձկներով և օդը թռչուններով:

Վեցերորդ օրը Աստուած ստեղծեց ցամաքային կենդանիները, և ամենից յետոյ մարդը:

Եւ եօթներորդ օրը Աստուած հանգստացաւ:

Աստուած ոչինչ բանի կարօտ չէր և չէ, այս բոլորն ոտեղծեց մարդու համար, որ մարդ նրանցով ճանաչ Աստուածոյ մեծու-

թիւնը, փառքը և բարերարութիւնը, և երկրպագութիւն տայ նրան, և միայն նրան փառաւորէ ասելով. Փառք Քեզ Աստուած, փառք Քո ամենամեծ ողորմութեանդ և անմահ թագաւորութեանդ համար:

5.

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ԵՒ ԴԵԻԵՐ:

Արարածոց մէջ ամենից գերակատարը հրեշտակներն և մարդիկ են՝ Աստուած ստեղծեց տասն երկու գունդ՝ հրեշտակներ, որոնք հոգեղջն և անմահ էակներ են: Դրանցից երեք գունդ՝ իրանց մոքում Աստուածոյ կամքի հակառակ հպարտութիւն անցկացրին ու իրանց համախոհներով զրոկուեցան իրանց փառքից և երջանկութիւնից—Աստուածոյ տեսութիւնից և նրան փառաւորելուց, և կոչուեցան դե կամ ստանայ:

Բարի հրեշտակները Աստուծոյ կամքին
Հպատակ մնացին, նրանց պաշտօնն է, միջ-
նորդ լինել Աստուծոյ և մարդկանց մէջ,
և անլռելի ձայնով անդադար փառա-
բանել ամենասուրբ Երրորդութիւնը։ Զար
հրեշտակները, այսինքն գեերը կամ՝ սա-
տանաները միշտ ընդդէմ մնացին Աստու-
ծոյ կամքին։

6.

ՄԱՐԴԻԿ.

Մարդն բանական ու ազատ՝ ունի Հոգի,
և մարմին, ստեղծուած է Աստուծոյ պատ-
կերի նման։

Աստուած մարդու մարմինը ստեղծեց
Հողից, և տուաւ անմահ Հոգի, փչելով
նրա երեսին շունչ կենդանի։ և բնակե-
ցրուց դրախտի մէջ, և կարգեց նրան տէր
և իշխան բոլոր արարածների վրայ։

Աստուած մարդն ստեղծեց հրեշտակնե-
րի նման երջանիկ լինելու, սուրբ և ար-
դար մնալու, անմեղ վիճակի մէջ ապրելու,
իրեն ճանաչելու և սիրելու, ու յափիտե-
նական փառքը ժառանգելու համար։ Աս-
տուած, մարդուն իւր փառքի համար
ստեղծեց, երջանիկ վիճակի մէջ դրեց, ուր
ոչ ցաւ, ոչ տառապանք պիտի ունենար,
եթէ պատուիրանազանց ըը լինէր, և եթէ
այսօր այսչափ թշուառութիւն և վիշտ է
կրում; պատճառը մեր նախածնողաց մե-
զանչելն է, որ Աստուծոյ կամքին հակառակ
վարուեցան։

Խսկ այժմ Քրիստոսով փրկուածներիս՝
յաւիտենականութեան մէջ երջանիկ և
կամ՝ թշուառ լինելը, մեր կամքիցն է
կախուած։ Մարդս յաւիտենական եր-
ջանկութեան հասնելու համար, պէտքէ
հաւատալով մօտենայ Ս. Գրքին, որը Աս-
տուծոյ ազգեցութեամքն է զրուած, ո-
րով միայն կը կարողանայ Աստուծուն հա-
ւատալ, ճանաչել, սիրել, պաշտել և

հետեւիլ նրան, և յաւիտենական փառքը
ժառանգել:

7.

ԱԴԱՄ, ԵՒԱ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԵՂՔԸ:

Աստուած Աղամին ստեղծեց հողից և
Եւային՝ նրա կողից. Աստուած նրանց եր-
կուսին էլ օրհնեց և բնակեցրեց պրախակ
մէջ՝ որ մի գեղեցիկ պարտէզ էր, ամեն
տեսակ պտուղներով լիքը:

Դրախտում մեր նախածնողաց կերա-
կուրն էր ծառերի պտուղները, այնուեղ եր-
կու գլխաւոր ծառեր կային, մէկի անու-
նըն՝ վենաց ծառ, որի պտուղը ուտելով պիտի
մնային անմահ, և միւսինը՝ ծառ գիտենա-
լու բարձր ու լար: Որով պիտի փորձէր Աս-
տուած նրանց հնագանդութիւնը և ոէրը
դէպ ինքը, և զգուշացրեց նրանց, որ այն
ծառի պտուղը չուտեն, եթէ ուտեն կը
մեռնին:

Մեր նախածնողների կեանքը շատ երջա-
նիկ էր, նրանք տեսակցում էին Աստուածոյ
և հրեշտակների հետ, ոչ մէկ բանի հոգո
չունէին, աշխատանքն էր զուարձութիւն,
կերակուրը և խմելիքը՝ պատրաստ. անմե-
զութիւնն էր նրանց ծածկոյթը. օդը պարզ
և մաքուր՝ ոչինչ չէր վնասում նրանց. և
գաղաններից երկիւղ չունէին. այսպէս յա-
ւիտենական երջանկութեամբ պիտի փա-
ռաբանէին Աստուածոյ: Բայց նոքա Աստու-
ծոյ հրամանին անհնազանգ լինելով՝ կոր-
ցրին այն բոլոր երջանկութիւնը, սատա-
նային խափուելով, որը օձի կերպարանք
առած, խաբէական խօսքերով թելադրեց
Եւային ուտել արգելուած պառւղը, և Ե-
ւան համոզեց Աղամին որոնք կերան ու-
զրկուեցան իրենց երջանիկ փառքից. այնու-
հետեւ նրանք զգացին Երկնու և անօն. և պա-
հուեցան ծառերի տակ, և իրենց մերկու-
թիւնը ծածկեցին թզենու տերեւներով:

ԱԴԱՄԻ ՈՒ ԵՒԱՅԻ ՊԱՏԻԺԸ:

Պատուիրանազանցութիւնից յետոյ՝ Աստուած այցելութիւն արաւ Աղամին։ Աղամ փոխանակ խոստովանելու իւր մեղքը, աշխատում էր արդարանալ, յանցանքը կնոջ վրայ ձգելով, և կինը՝ օձի վրայ. և այսպէս, սկսած ուեցան Աստուածանից, ենթարկուելով չարչարանքի, ցաւի, հիւանդութեան և մահուան։ Նախածնողները այնուշետե ընկան մարմնաւոր և հոգեւոր թշշուառութիւնների մէջ, այս աշխարհում և հանդերձեալ կեանքում։ Մարմնաւոր թշշուառութիւններն են՝ պատապանի, հիւանդութիւն և մահ։

Հոգեւոր թշշուառութիւններն են՝ պատապանի, և սապանայի իշխանութեան պահ հայլ։

Աղամ և Եւայ, այս կեանքի դառն աշխատանաց ենթարկուեցան, դրախտից արտաքսուեցան, և բոլոր կենդանիների վրայ ունեցած իշխանութիւնից զրկուեցան։ Նախածնողաց յանցանքի պատիժը նրանց սե-

ըընդի վրայ էլ տարածուեց, ուստի ամեն մարդ նրանց յանցանքի մէջն է ծնւռում, և այն յանցանքը ասվումէ Աղամայ կամ սկզբնական մեղք։

ՄԵՍԻԱՅԻ ԳԱԼՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ:

Աղամ ու Եւայ և նրանց սերունդները յոյս չեին ունենալ, Աստուածոյ հետ հաշտուելու, եթէ Աստուած՝ իւր գութն և սէրը մարդկանց ցոյց չըտար ու չողորմէր նրանց, և չը խոստանար Փքիւ ուղարկել յաշխարհ, որ երջանիկ վիճակից զրկուած ու դատապարտուած մարդուն կրկին վերականգնեցնէ, և միջնորդ լինի Աստուածոյ և մարդկանց մէջ։ Այնպիսի միջնորդ, որ մարդկային ազգը սատանայի գերութիւնից ազատէ, մեղքերը քաւէ, և Աստուածոյ հետ հաշտեցնէ ու արքայութեան դռները՝ մարդկանց առաջ բանայ։

Մարդկային ազգը յիրաւի կարօտ էր այսպիսի մի Փրկչի և միջնորդի գալստեան, և այս միջնորդը պիտի լինէր միանգամայն Աստուած և մարդ:

10.

ՄԵՐԴԿԱՆՑ ՎԻՃԱԿԻ ԱՇԽԱԲՈՅՀԻ
ՍՏԵՂԾՈՒԵԼՈՒՑ ՄԻՆՉԵՒ ԶՐՀԵԴԵՂԼ:

Մեր նախածնողները Աղամ—Եւայ իրենց մեղանչելուց յետոյ ապաշխարեցին, որով և հաճելի եղան Աստուածոյ: Աստուածողորմեցաւ նրանց և խոստացաւ, Մեսիայի գալուատն և նրանց սերունդների փրկութիւնը:

Նրանք մեղանչելուց առաջ, զաւակներ չունէին ու յետոյ ունեցան, մենք Աղամի երեք օրդու անունները գիտենք, և միայն նրանց վրայ խօսինք:

1. Կայէն, 2. Աբէլ և 3. Սէթ, բայի սրանցից՝ նրանք ուրիշ շատ զաւակներ էլ

ունէին: Կայէնը խստասիրտ, նախանձոտ և չար մարդ էր: Աբէլ հեղահոգի ու առաքինի էր, նա իւր եղբայր Կայէնի ձեռքով սպանուեց, առանց սերունդ թողնելու:

Սէթ և իւր սերունդը արդար և բարեպաշտ էին, որոնք են՝ Ենովս, Ենովք, Մաթուսաղայ, Ղամէք և Նոյ: Սրանք բոլորն էլ ճշմարիտ Աստուածապաշտ էին, Սրանց Ս. Գիրքը անուանում է Աստուածոյ որդիւն, և Նահապէտնէր: Ամենից երեւելին Ենովք՝ իւր սրբութեան համար հաճելի եղաւ Աստուածոյ և կենդանի՝ երկինք վերացաւ:

Կայէնի որդւոց վարքը համարեալ թէ համաձայն էր իրենց հօր վարքին, բայց յետոյ Սէթի ցեղն էլ վատացաւ՝ չարերի հետ խընամութիւն անելով, այն ժամանակ արդար մարդ չը մնաց աշխարհի երեսին, միսյն Նոյ՝ Նահապէտն ու իւր ընտանիքը հուճելի էին Աստուածոյ, որ Սէթի ցեղիցն բարեպաշտ ու երկիւղած անձն էր:

ԶՐՀԵՂԵՂԵ:


Աստուած պատժեց մարդկանց նրանց գործած մեղքերի համար, համաշխարհական ջրհեղեղով, միայն նոյ - նահապետ և նրա ընտանիքը բոլորն ութն հոգի արդար լինելով Աստուածոյ առաջ, ազատ մնացին ջրհեղեղից, նոյ և իւր կինը, նոյի երեք որդիքը Սեմ, Քամ և Յաբէթ և նրանց երեք կայնայքը:

Նոյ Աստուածոյ հրամանով տապան շինեց և վերցրեց իւր հետ տապանի մէջ սուրբ կենդանիներից եօթն եօթն զոյգ. իսկ անսուրբներից՝ մի մի զոյգ, նրանք բոլորեքեան տապանի մէջ ազատ մնացին, համաշխարհական ջրհեղեղից, և ջուրը հարիւր յիսուն օր մնաց երկրի երեսին. Նոյ գրեթէ մի տարի տապանի մէջ մնալուց յետոյ Աստուածոյ հրամանով դուրս եկաւ ինքն և իւր հետ եղողները, բոլորը ութն հոգի, և ուրբ կենդանիներից Աստուածոյ զոհ մաացց

Արարատեան Մասիս լերան վրայ, ուր տապանը հանգստացաւ, և շնորհակալ եղաւ Աստուածանից իւր ընտանիքով: Նրանցից երկրորդ անգամ բազմացան մարդիկ երկրիս վրայ, և գրա համար նոյ աշխարհի երկրորդ հայր կոչուեցաւ:

Նոյ տնկեց այգի, երբ խաղողը հասաւ, քամեց, և չը գիտենալով գինու զօրութիւնը՝ այնչափ խմեց՝ որ արքեցաւ, և անզգայ քնած ժամանակ երեեցաւ մերկութիւնը: Քամ հօր մերկութեան վրայ ծիծաղելով պատմեց իւր եղբայրներին, նրանք վեր առան շոր և յետ յետ գնալով ծածկեցին իրենց հօր մերկութիւնը: Նոյ երբ զարթեցաւ, իմացաւ Քամի արարքը, օրհնեց Սեմին ու Յաբէթին, իսկ Քամին անիծեց:

Ջրհեղեղից յետոյ մի առ ժամանակ մարդիկ երկիւղած էին Աստուածանից, բայց այդ երկար չը տեեց, մարդիկ աւելի վատացան ու չարացան, և սկսեցին Արարչի փոխանակ՝ արարածներին պաշտել:



12.

ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԼԵԶՈՒԱՅ
ԲԱԺՄԱՆՈՒՄԸ:

Նոյի սերունդը բազմացաւ Արարատում,
չուեց գէպի Միջագետք Սենաար գաշտը
Բէլի առաջնորդութեամք, որ Բաղդատ քա-
ղաքի առաջին թագաւոր անուանեց իրեն:
Մինչեւ այդ ժամանակ մարդիկ, խօսումէին
մէկ լեզւով:

Մարդկանց մէջ ծնաւ ամբարտաւան հո-
գի և տղայական միտք, Բէլի հրամանով
սկսեցին շինել յիշատակարան-քաղաք և
աշտարակ (բարձր բուրջ) որի գլուխը մին-
չեւ երկինքը հասնի, որ երբ ուրիշ անդամ
ջրհեղեղ պատահի, մարդիկ նրա վրա բարձ-
րանալով՝ կարողանան ազատուիլ պատժից,
կարծելով թէ Աստուած կարող է չարա-
գործներին միայն ջրհեղեղով պատժել: Աս-
տուած մարդկանց մտադրութիւնը խափա-
նելու համար նրանց լեզուները խառնակեց,
և այն սկսած մէծ գործը մնաց անկատար,

և մարդիկ ցրուեցան աշխարհիս երեսին
զանազան կողմեր, և աշտարակի ոտեղը
կոչուեցաւ Բաբելոն, որ նշանակում է
խառնակութիւն:

13.

ԿՈ.Ա.ՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ:

Նեզուների խառնակութեան հետ մոտաւ
մարդկանց մէջ կամքի հաճոյքները. նրանց
մէջ սկսաւ նսեմանալ ճշմարիտ Աստուած-
պաշտութեան լոյսը, եւ հետ զհետէ մար-
դիկ մոռացան ճշմարիտ Աստուած, և
սկսեցին պաշտել արեգակը, լուսինը և
աստղերը, և զանազան երկրային արարած-
ներ: Այս կոչվում է կատաղալուսնիւն կամ
հէլլանոսոսնիւն, և այնքան տարածուեցաւ
որ Սեմաց ազգը ևս ընկաւ կռապաշտու-
թեան մէջ:

14.

ԱԲՐԱՀԱՄԻ ԿՈՉՈՒՄԸ:

Կուապաշտոռթիւնը երբ տիրել էր բոլոր
աշխարհին, Աստուած՝ ընտրեց Սեմայ ցե-
ղից մէկ առաքինի և բարեպաշտ մարդ՝
Աբրահամ անունով, որ կենում էր Քաղ-
դէացւոց աշխարհում։ Աստուած հրամա-
յեց Աբրահամին թողնել իւր հայրենիքն ու
ազգը, և գնալ բնակուիլ այլ երկրում,
զոր ինքը ցոյց կը տայ նրան, և խոստա-
ցաւ, դարձնել նրան բաղմաթիւ գաւակ-
ների հայր։ Աբրահամ հաւատաց Աստու-
ծոյ խօսքին և գնաց Քանանացւոց երկիրը,
որ կոչվումէ Պաղեստին՝ որի մայրաքաղաքն է
Երուսաղէմ։

15.

ԱՍՏՈՒՇՈՑ ՈՒԽՏԸ ԱԲՐԱՀԱՄԻ ՀԵՏ։

Աստուած Աբրահամի հաւատոն ու յոյսը
իւր վրայ աւելի հասաւաելու համար. երե-

ւաց նրան տեսիլքով, ու ասաց, թէ իրեն
պիտի տնէ շատ ազգերի հայր, ու պիտի
տայ նրան ու նրա զաւակին Քանանացւոց
երկիրը, և խոստացաւ նրան որ պիտի ծնի
իրան որդի, և անունը կոչէ Խսահակ։

16.

ԱՍՏՈՒՇՈՑ ՀԻՒՐ ԳԱԼԸ ԱԲՐԱՀԱՄԻ ՄՈՏ։

Աբրահամի Հիւրասիրութիւնը այնչափ
մէծ էր, որ Աստուած հիւր եկաւ նրա մօտ.
մի օր Աբրահամ վրանի դրանը նոտած էր,
տեսաւ որ երեք օտարական գալիս են դէպի
ինքը։ Աբրահամ գնաց նրանց առաջ և հը-
րաւիրեց, ու պատրաստեց սեղան։ Հաց ու-
տելու ժամանակ, հիւրերից մին կրկնեց
Աստուծոյ խոստումը Աբրահամին թէ, նա
կունենայ որդի, բայց նրա Սարքա կինը, որ
վրանի ետեւ կանգնած էր, ծիծաղեց, միա
բերելովիւր ծերութիւնը, և յանդիմանուե-
ցաւ իւր անհաւատութեան համար։

Մի տարուց յետոյ կատարուեցաւ Աստուծոյ խոստումը. Աբրահամ հարիւր տարեկան էր և Սարրա իննսուն՝ երբ ծնաւ իւր անդրանիկ որդին, և նրա անունը դրին Խաչակ, ինչպէս Աստուած պատուիրել էր:

17.

ՍՈԴՈՄ — ԳՈՄՈԲԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ:

Սոդոմ — Գոմոր քաղաքների բնակիչների չարութիւնները մինչև երկինք բարձրացան. Աստուած վճռեց կործանել այդ քաղաքները, ուստի ուղարկեց երկու հրեշտակ, որոնք ազատեցին արդար Ղովտին ընտանեօք նրանց միջից, ապա իջաւ երկնքից կրակ և ծծումք, և այրեց բոլոր բնակիչներին, իսկ Ղովտի կինը հետաքրքրութեամբ յետ նայելուն համար դարձաւ ապի արձան:

18.

ԻՍԱՀԱԿԻ ԶԵՆՈՒՄԸ:

Աստուած Աբրահամի հաւատը փորձելով, հրամայեց որ իրան՝ ողջակէզ մատուցանէ Խաչակին: Աբրահամ ամենելին չը գժուարացաւ Աստուածոյ հրամանը կատարելու, այլ ուրախութեամբ և հնազանդութեամբ տարաւ Խաչակին նշանակած տեղը: Աբրահամ կապեց իւր որդու ձեռներն ու ստները, և դրեց սեղանի վրայ, երբ որ սուրն առաւ ձեռքը, որ մորթէ. Աստուածոյ հրեշտակը արգելեց նրան, տալով փոխանակ Սահակի՝ խոյն ի զոհ: Աստուած նրա այսպիսի հնազանդութեան համար օրհնեց նրան, և կրկնեց իւր խոստմունքը:

Այս անցըը նշանակում էր Քրիստոսի մեռնիլը Խաչի վրայ, մեր փրկութեան համար:

ԽՍԱՀԱԿԻ ԱՄՈՒԽՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՐԴԻՔԸ:

Սարրայի մահից երեք տարի յետոյ Աբրա-
ւահամ՝ որ շատ ծերացած էր, ուղարկեց
իւր հաւատարիմ ծաւայ Եղիազարին Սի-
ջագէտք իրեն մեռած եղբօր նաքովրի քա-
զաքը, նրա որդի Բաթուէլի մօտ, շատ ըն-
ծաներով, և նրա դուստր Ռէբեկային քե-
րել տուեց և ամուսնացրեց Խսահակի հետ։

Աբրահամ՝ խորին ծերութեան հասած՝
հարիւր եօթանասուն և հինգ տարեկան հա-
սակում վախճանուեցաւ, և թաղեց նրան
Խսահակ, իւր մօր Սարրայի մօտ, Քերրոնի
նէնն կոչուած այրում։

Քէբեկայ քսան տարի ամուլ մնաց, բայց
յետոյ Աստուած ողորմեցաւ նրան, և ու-
նեցաւ երկորեակ որդիք՝ Եսաւ և Յակոբ,
երկաւսն էլ տարբեր բարուց տէր էին։
Եսաւ էր այր քաջաբարոյ և որսորդու-
թեամբ էր պարապում, ու սիրելի էր հօ-
ռը՝ որսորդութեան համար։ Նա իւր ծնո-

ղաց կամքին հակառակ երկու կին առաւ
կռապաշտ ազգից, որոնց հետ խնամութիւն
անելը՝ Աստուած արգելել էր։ Իսկ Յակոբն
էր խաղաղասէր, պարկեցտ և հնազանդ
իւր ծնողացը. նա մնում՝ էր տանը և օգ-
նում էր իւր մօրը՝ տան գործերում, մայրը
նրան աւելի էր սիրում։

Իսահակ ծերութեան հասակում կուրա-
ցած՝ պատուիրեց Եսաւին, որ գնայ որս
բերէ, և կերակուր պատրաստէ, որ ուտէ
և օրհնէ նրան։ Ռէբեկան երբ այս լսեց,
պատրաստեց Խսահակի սիրած կերակուրը,
ու Յակոբի ձեռքով ուղարկեց նրան. Խսա-
հակ կերաւ, և չճանաչելով, անդրանկու-
թեանօրհնութիւնը տուեց Յակոբին, Եսաւ
համարելով նորան։



ՅԱԿՈԲԻ ՄԻԶԱԳԵՑՔ ԳՆԱԼԸ ԵՒ ՆՐԱ
ՈՐԴԻՔԸ:

Յակոբ վախենալով Եսաւի բարկութիւնից և նախանձից՝ որ չսպանէ իրան, օրհնութիւնը իւլելու պատճառով՝ փախաւ Միջագետքի Խառան քաղաքը, իւր ծնողաց խորհրդով. ճանապարհին գիշերը վրայ հասաւ, և Յակոբ ստիպուեցաւ բաց օդի տակ անցկացնել. մի քար գրեց գլխատակը ու քնեցաւ. աեսիլքում երեւեցաւ նրան մի սանդուղ, որի ծայրը մինչի երկինք էր համնում, և նրա վրայ հրեշտակները ել և է՞ էին անում. և Աստուած՝ Սանդուղի գլխին կանգնած՝ Աքրահամին տուած իւր խոստումները նորոգում էր: Յակոբ զարթեցաւ, և Աստուածանից շնորհակալ լինելուց յետոյ, շարունակեց իւր ճանապարհը և հասաւ իւր մօրեղբօր Լաբանի մօտ, և ամուսնացաւ նրա Լիա և Ռաքէլ երկու

գոտերաց հետ: Յակոբ մնաց իւր աներոջ մօտ քսան տարի, և հարստացաւ, ստանալով բազմաթիւ անասուններ, ծառաներ և աղախիններ:

Այսչափ ժամանակում ունեցաւ նաև տասներկու որդի, որոնց անուններն են, Ռուբէն, Նմաւոն, Ղեի, Յուդա, Իսաքար, Զաքուղան, Դան, Նեփթաղիմ, Գաղ, Ասեր, Յովոէփ և Բենիամին: Արանք յետոյ եղան Նահապետներ Խորայէլաֆոց տասն երկու ցեղի: Յակոբ բռլոր դժուարութեանց յաղթելով՝ իւր բռլոր ընտանիքով և սուացուածով վերադարձաւ Քանանացոց երկիրը իւր հօր տուն, և ճանապարհին գօտեմարտելով հրեշտակի հետ՝ ստացաւ Խորայէլ (Աստուածատես) անունը: Յակոբի տան մէջ պահուեցաւ աստուածպաշտութեան ճշմարիտ հաւատը որդւոց որդի:

Իսահակ խորին ծերութեան հասած, հարիւր ութսուն տարեկան մեռաւ, Եսաւ էլ հօր մահը լսելով այնտեղ եկաւ, երկու եղբայրներ, իրենց հայրը մեծ տրտմութեամբ

թաղեցին Քեթրոնի կրկին Այրում, Աբրա-
հայի մօտ:

21.

ՅՈՎՍԵՓԻ ՎԱՃԱՌՈՒԻՒԼԲ:

Յակոբ շատ էր սիրում Յովսէփին: Յակո-
բի սէրը և Յովսէփի միամտաքար պատմած-
եւաղները զարթեցրեց նրա եղբայրների մէջ
ատելութիւն գէպի ի՞նքը, մինչեւ այն աստի-
ճան որ կամ նում էին նորան սպանել, որով-
չետեւ նա տեսած էր երազում, իւր խուր-
ծի կանգնելը՝ և եղբարց խուրձերի երկր-
պագութիւն տուլը իւր խուրձին, և արե-
գակի, լուսնի և 11 աստղերի իրան երկըր-
պագելը որոնք նշան էին նորա մեծանալուն:
Յետոյ նրանք վաճառեցին Յովսէփին օտա-
րսզգի վաճառականներին և ասացին ի-
րանց հօրը թէ, գազանները պատառել են
Յովսէփին: Յակոբ իւր ծերութեան հասա-
կում անմիսիթար սգի մէջ ընկաւ Յովսէփի
կորչելու պատճառով:

22.

ՅՈՎՍԵՓԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ:

Յտարազգի վաճառականները (Իսմայէլա-
զիք.) Յովսէփին տարան Եգիպտոս և վաճա-
ռեցին Պետափիքս անուն պալատականին:
Յովսէփիը օտար երկրում, վարում էր ա-
ռաքինի և համեստ կեանք. որ պատճառ
եղաւ նրան նեղութեան մէջ ընկնելու և
մինչեւ անգամ բռնուեցաւ նա բանտում,
Պետափիքսի կնոջ զրպարտութեամբ:

Յովսէփի հետ բանտարկուեցան նաև թա-
գաւորի տակառապետն ու մատակարարը.
նրանք երկուսն էլ միանգամ բանտում երազ
տեսան, և Յովսէփ երկուսի մեկնութիւնն
ևս տուեց, և ճիշտ այնպէս էլ կատարուե-
ցաւ: Անցաւ երկու տարի, Փարաւօն թագա-
ւորն էլ երազ տեսաւ, երբ Եգիպտոսի երա-
զահաններն ու գիտնականները թագաւորի
երազը չը կարողացան մեկնել, և նա զայ-
րացած էր՝ այն ժամանակ ազատուած տա-

կառապետի միտն եկաւ Յովսէփի, և նրան
Փարաւոնի մօտ գովեց որ քաջ երազահան
է: Ուստի շուտով Յովսէփի՝ Փարաւոնի հրա-
մանով բանափից հանեցին և թագաւորի ա-
ռաջ բերին: Թագաւորը Յովսէփին շատ սի-
րեց երազները մեկնելու և ապագայ եօթ-
նամեայ սովը գուշակելուն համար, կարգեց
իւր երկրորդը ու Եղիպտոսի իշխան, Յով-
սէփ յանձնարարութիւն ստացաւ նրանից,
որ պատրաստէ պտղաբեր տարիներում ցո-
րեն, որ սովի ժամանակ ժողովուրդը հաց
ունենայ ուտելու, Յովսէփ մեծ հանճարով
կատարեց այդ յանձնարարութիւնը:

Աստուած, թէև փորձումէ առաքինի
մարդկանց զանազան փորձանքների մէջ,
բայց իւր օգնութիւնը չէ պակասացնում
նրանցից:



23.

ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ԵԳԻՊՏՈՍ ԳԱԼԸ:

Երբ որ սովը ամեն տեղ սաստկացաւ, Յով-
սէփի եղբայրները եկան Եգիպտոս ցորեն
գնելու: Յովսէփ արդէն ունէր լաւ միջոց
վրէժինդիր լինելու իւր եղբայրներից,
նրանց իւր գէմ գործած յանցանքների հա-
մար, բայց նա ամենեին չը յիշեց նրանց
չարագործութիւնը, այլ ծանօթութիւն չը
տալով ընդունեց նրանց սիրով, և երկրորդ
անգամին յայտնեց, որ ինքն իրանց եղբայր
Յովսէփին է, ու առատ պաշարով յետ դար-
ձրուց նրանց իւր հօր մօտ, և պատուիրեց
նրանց որ Եգիպտոս բերեն իրանց հօրը՝ բո-
լոր ընտանիքով:

24.

ՅԱԿՈԲԻ ԵԳԻՊՏՈՍ ԳԱԼԸ:

Յակոբ՝ երբ լսեց Յովսէփի կենդանութեան
լուրը, լցուեցաւ մեծ ուրախութեամբ, և

շուտով ճանապարհ ընկաւ, Յովսէփի ընդ-
առաջ գնաց իւր հօրը մեծ բազմութեամբ
ու այնպէս ընդունեց նրան: Յայտնեց Փա-
րաւոնին իւր հօր գալուստը բոլոր ընտանի-
քով, և իւր հօրը ներկայացրեց թագաւո-
րին: Յովսէփի ամեն կերպով աշխատում էր,
որ իւր հայրը Յակոբ, իւր կեանքը խաղաղ
և երջանիկ անցկացնէ, և քնակեցրուց Գե-
սէմ կոչսւած տեղը:

25.

ՅԱԿՈԲԻ ԵՒ ՅՈՎՍէՓԻ ՄԱՀԸ, ԽՄՐԱՑԵԼԱՑԻՈՑ
ԶԱՐՉԱՐԱՆՔԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ:

Յակոբ Եգիպտոսում տասն և եօթ տարի
ապրելուց յետոյ, հարիւր քառասուն և
եօթը տարեկան հասակում հիւանդացաւ,
Յովսէփի նրա մօտ տարաւ իւր երկու որդի-
քը Եփրեմ և Մանասէ, Յակոբ իւր բոլոր որ-
դիքը և Յովսէփի որդիքը օրհնեց, և նրանց
էլ իւր որդւոց կարգը դասեց, և պատուի-

րեց որ իրեն իւր հայրենի գերեզմանում
թաղեն. մարգարէացաւ Մէսիայի գալուստը
Յուգայի ցեղից, ու հոգին աւանդեց,

Յովսէփի իւր հօր մարմինը զմռսել տուեց,
քառասուն օր բոլոր Եգիպտոս նրա վրայ
սուգ պահեց. Փարաւոնի հրամանով՝ մեծ
հանդիսով Յովսէփի իւր եղբայրների հետ
միասին իրենց հօր մարմինը տարան Քանա-
նացւոց երկիրը և թաղեցին Քեփրոնի կրկն
Այրի մէջ Աբրահամի և Խսահակի մօտ:

Յակոբի մահից յիսուն տարի յետոյ, կան-
չեց Յովսէփի իւր եղբայրներին ու ասաց. Ես
մեռնում եմ, բայց երդուեցնում եմ ձեզ,
որ երբ Աստուած ձեզ ողորմի և իւր խոս-
տացած երկիրը տանի ձեզ, իմ ոսկորներս
էլ ձեզ հետ տանելու յը մոռանաք. Յովսէփի
Աստուծոյ խոստմանը կատարեալ հաւատա-
լով մեռաւ հարիւր տասն տարեկան:

Յակոբի ու Յովսէփի մահից յետոյ, ԽԹՐԱ-
յէլացիք բազմացան Եգիպտոսում, մինչև
որ Եգիպտացւոց թագաւորները վախեցան,
որ չը լինի թէ, նրանք աւելի հզօրանան և

տիրեն Եգիպտոսին։ Ուստի նրանց, իրենց ազատութեան վրայ մտածելու ժամանակ չը տալու համար, ծառայացնում էին զմանազան ծանր ծանր աշխատանքներով։ Փարաւոն թագաւորը հրամայեց մանկաբարձներին, որ իւեղդեն իսրայէլացւոց նորածին արու երեխաներին նորանց արական սեռը պակասացնելու։ Սակայն Աստուծոյ օրհնութիւնը աւելի բազմացնում էր նրանց թիւը։

26.

ՄԵԼՔԻՍԵԴԵԿ.

Երութաղէմի Մելքիսեդեկ թագաւորը Աքրատհամի առաջ գնաց երբ նա յաղթութեամբ և գերիներով դառնում էր Սոդոմ, հաց և գինի տուաւ։ իբրև քահանայ Աստուծոյ բարձրելոյ, և օրհնեց նորան, որին և տառանորդեց Աքրահամ։

Մելքիսեդեկ ճշմարիտ օրինակ եղաւ Քրիստոսի քահանայապետութեամն՝ իւր այս

պատարագաւ, և օրհնեց Ահարոնեան քահանայութեան արմատը՝ Աքրահամին։

27.

ՅՈՎԵ.

Յովե Եսաւի ցեղիցն էր, մհծատուն և աստուածապաշտ։ իւր բարեպաշտական գործերով—արդարասիրութեամբ, առատաձեռնութեամբ, և խնամատարութեամբ կարօտելոց, Աստուծոյ համելի էր, և եղաւ օրինակ համբերութեան, տանելով բազմապիսի փորձութեանց։ Եւ երբ սակաւ ժամանակի մէջ զրկեցաւ իւր բոլոր ստացուածքից, որդիքներից և մարմնոյ առողջութիւնից։ և լցուեց անհնարին վէրքերով, ասաց «մերկ ծնայ, և մերկ մեռանիմ, ծէր ետ և ծէր էաւ, եղիցի կամք ծեառն օրհնեալ»։

Յովե երկար տարիներ, զուրկ մարդարիրութիւնից, հրապարակ ձգուած՝ անօգնա-

կան և անմիտիթար մնալուց յետոյ, Աստուած վարձատրեց նորա առաքինութիւնը. առողջացուց և կրկնապատիկ ստացուածովք հարստացուց, ծնան կրկին՝ եօթն որդիք և երեք դստերք, և ապրեցաւ այլես 170 տարի և վախճանուեցաւ 248 տարեկան:

28.

ՄՈՎՍԻՍԻ ԾՆՈՒՆԴԸ, ԵՒ ՓԱԽՈՒՍՏԸ:

Այն հալածանքի ժամանակ ծնաւ Մովսէս, նրա մայրը երեք ամիս ծածուկ պահեց նրան, և յետոյ թագաւորի երկիւզից դրեց երեխային մէկ փաքրիկ ձիւթապատ արկոի մէջ, և ձգեց նեղոս գետի ափը: Այդ միջոցին եկաւ Փարաւօնի աղջիկը գետի ափը լուացուելու, տեսաւ արկոիկը ջրի երեխն, հրամայեց հանել և բանալ, և գտաւ նրա մէջ կայտառ երեխային, որ լաց էր լինում, թագաւորի աղջկայ գութը շարժուեցաւ, վերցրեց մանուկը և տուեց պահելու մի ծծմօր,

որ երեխայի մայրն էր: Երբ մանուկը երեք տարեկան դարձաւ, Փարաւօնի դուստրը ընդունեց նրան իրեն որդեզիր, և անունը դրեց Մովսէս, որ նշանակումէ ՀՅԵ հանաժ: Մովսէս մնաց թագաւորական պալատում մինչի քառասուն տարեկան դառնալը և վարժուեցաւ Եգիպտական իմաստութեամբ:

Մովսէս որ Աստուածանից սահմանուած էր լինել Խորայէլի փրկիչ, վախաւ Մադիամացւոց երկիրը, Փարաւօնի ձեռքից, վախենալով որ չսպանուի, իւր ազգակցին նեղացնող մէկ Եգիպտացի սպանելու պատճառով:

Մովսէս մնաց օտարութեան մէջ քառասուն տարի և պարապում էր խաշնարածութեամբ, Յոթոր քրմի մօտ, և նրա Սեպիորա անուն դուստրը առաւ իրան կին և բնակուեցաւ իւր աներոջ մօտ, և երկու որդի ունեցաւ, որոց անունները Գերսամ և Եղիազար դրեց:

ՄՈՎՍԻՍԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
ՓԱՐԱԽՈՆԻ ՄՕՏ :

Մէկ օր Մովսէս արածացնում էր ոչխար-
ները Քորէք սարի մօտ, տեսնում է, որ մո-
բենին վառուած է և չէ այրվում, և երբ
ժօտեցաւ տեսնելու՝ յանկարծ լսեց մորե-
նու միջից ձայն, այս ձայնը Աստուածային
էր. որ նրան ուղարկում էր Փարաւօնի մօտ՝
իւր ժողովուրդը արձակելու:

Մովսէս աստուածային պատուէրներն
ընդունելուց յետոյ, եկաւ իւր եղբայր
Ահարօնի մօտ, և երկուսով ներկայացան
Փարաւօնին, և պատմեցին Աստուածոյ հրա-
մանը, բայց Փարաւօն նրանց չը լսեց, և
ապա տասն հրաշքներով Աստուած հար-
սւածեց Եգիպտացիներին:

- 1. Բոլոր ջրերը արիւն դարձան.
 - 2. Գորտերով.
 - 3. Մունով.
 - 4. Նանամաննով.
- } Բոլոր երկիրը ծած-
կուեցաւ:

5. Անասունները սատակեցան.
6. Մարդկանց ու անասունների վրայ
վերքեր դուրս եկան.
7. Սառափիկ կարկուտ եկաւ.
8. Երկիրը մարախով ծածկուեցաւ.
9. Երեք օր բոլոր Եգիպտասին սաստիկ
խաւար տիրեց.
10. Եգիպտացւոց բոլոր անդրանիկները
մի գիշերում մեռան: Եւ ապա հազիւ թէ
կակղացաւ Փարաւօնի խստասրտութիւնը,
և արձակեց Խորայէլացւոց, որ էին վէց հա-
րէ-ը հազար 600,000 հոգի, կանայք և երե-
խաներն չը հաշուելով, Յովսէփի ոսկոր-
ներն էլ իրենց հետ վնրառնել չը մոռացան,
ինչպէս որ նրանց պատուիրած էր Յովսէփի
երդումով:

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՅ ԵԼՔԸ—ՊԱՍԷՔԸ.—

ՓԱՐԱԽՈՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ:

Խորայէլացիք Եգիպտոսից դուրս գալուց
առաջ Աստուածոյ հրամանով կատարեցին

Պասէքը. — վերջին երեկոյին նիսան. — Մարտ
ամսի 14-ին: Ամեն տուն մորթեց մի հատ
անարատ գառն, խորովեցին ու կերան բա-
ղարջ հացով, (որ նշանակում էր մեր փըր-
կութիւնը Յիսուս Քրիստոսի զենլով Խաչի
վրայ.) և սահմանեցին, ամեն տարի կտա-
րել Զատիկը այն ամսաթուին՝ իրենց Եգիպ-
տոսից ազատութեան յիշատակը:

Այն երեկոյին Խորայէլացիք ճանապարհ
ընկան դէպի Կարմիր ծովը: Բոլոր ժամա-
նակ Աստուած առաջնորդում էր նրանց,
ցերեկը՝ ամպեղէն սիւնով, և գիշերը՝ Հրե-
ղէն սիւնով, որ ցոյց էր տալիս ճանա-
պարհը: Փարաւօն ստրջացաւ նրանց արձա-
կելու համար և կամեցաւ վերտարձնել:
Երբ նրանք հասան Կարմիր ծովի ափը, ահա
Փարաւօն հասաւ նրանց ետեից զօրքով,
Խորայէլացիք ընկան ահուղողի մէջ, և Մոլ-
ոէս Աստուածոյ հրամանով խփեց գաւազանը
ծովին, և ջրերը ինչպէս քարէ պարիսպներ
կանգնեցան աջ ու ձախ, և Խորայէլացիք
անցան միւս ափը, ինչպէս թէ ցամաքի վրայ:

Փարաւօն հետեւեց նրանց, և Մոլոէս խփեց
կրկին գաւազանը, և միացան ջրերը, և
խեղդուեցաւ Փարաւօն ծովի մէջ իւր բո-
լոր զօրքով:

31.

ՏԱՄՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՔՆԵՐԸ:

Եգիպտոսից դուրս գալու յիսուներորդ
օրը Աստուած Մոլոէսի ձեռքով Սինա Սարի
վրայ տռւեց Խորայէլացւոց Տամն պատուի-
րանքը՝ երկու քարեղէն տախտակների վրայ
գրուած: Աստուած տուաւ Խորայէլացւոց
ազգին Տամն պատուիրանքը նրա համար որ,
դրանով վերանայ նրանց միջից կոպտու-
թիւնը, խստասրտութիւնը, հակամիտու-
թիւնը դէպի կռապաշտութիւն բոլորովին
վերանայ և նրանք գառնան քաղաքացի,
կրթուած և Աստուածապաշտ ժողովուրդ:

Տամն պատուիրանքով Աստուած ուսու-
ցանում է մարդկանց երկու գլխաւոր և

Հարկաւոր պարտաւորութիւններ այն է՝
Աստուածաիրութիւն և ընկերութիւն։

1. Ես եմ քս Տէր Աստուածը, բացի ին-
ձանից՝ ուրիշ աստուածներ չունենաս։

2. Քեզ համար կուռք ըլշինես, երկրպա-
գութիւն չը տաս ու չը պաշտես նրանց։

3. Քո Տէր Աստուածոյ անունը չլիշես
մնուի բաների վրայ։

4. Շաբաթ օրը սուրբ պահես, վեց օր քո
ամեն գործերդ կատարես, և եօթներորդ
օրը, որ է քո Տէր Աստուածոյ շաբաթը, գործ
չանես։

5. Պատուիր քո հօրն ու քո մօրը, որ
քեզ բարի լինի, և երկար կեամք ունենաս
երկրի վրայ։

6. Մի սպաներ։

7. Մի շնար։

8. Մի գողանար։

9. Մի սուտ վկայեր ընկերիդ համար։

10. Մի ցանկար քո ընկերի ոչ մի ունե-
ցածին։

32.

ՆԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԵՆՔ։

Բացի Տասն—պատութրանքից Աստուած-
տուեց Խարայէյալացւոց Մոլուսի ձեռքով
և ուրիշ օքէնքներ ևս, որոնք էին նրանց
եկեղեցական և քաղաքան կարգաւորու-
թեանց համար։ Մինչեւ այս ժամանակ Խո-
րայէլի Խահապետները չունէին նշանակած
Աստուածպաշտութեան համար մէկ հաս-
տատ տեղ և ժամանակ, այժմ Մոլուս Աս-
տուածոյ հրամանով շինեց եկեղեցին, որ կո-
չուեցաւ խորան վկայութեան, որ էր մեծ վրան,
ուր լինում էր հանդիսով Աստուածպաշ-
տութիւն Ահարօնի հակողութեան ներքոյ,
և բահանում էր երեք մասի։

1. Սրան, ուր լինում էին զոհագործու-
թիւններ և օրինական լուացումներ։

2. Սրբութիւն ուր էին առաջարկաց սե-
ղաննի, որի վրայ գնում էին տասներկու
բաղարջ հացեր. Խնկոց սեղանն և եօթնա-
ջահեան աշտանակը։

Եւ 3. Սլբա-նի-ն ուրբայ, ուր էր Տաղանտէ
ուխոն, և նրա մէջ կային օրէնքի տախտակ-
ները, ոսկէ սափորը մանանայով լիքը, և
և Ահարօնի ծաղկեալ գաւազանը, և նրա
առաջ Մոլսիսական օրէնքի գրքերը:

Իսրայէլացիք ունէին և եկեղեցական
տօներ:

1. Շաբաթ, այն օրը գործ չէին կատա-
րում:

2. Պասէտ, և առն բաղադրակերպաց՝ որ էր յի-
շատակ ազատութեան եզիպտոսից:

3. Պէնտէկոստէ. յիշատակ Տասն — պա-
տուիրանաց տալուն:

4. Տարէֆլու-ի, որ էր քաղաքական ամսի
տուաջին օրը:

5. Քառո-նէան դօն:

6. Տաղա-տրահարդաց. յիշատակ քառաս-
նամեայ ճանապարհորդութեան Արաբիայի
անապատում:

7. Ամառէլիք, որ իմաց էին տալի փողեր
փշելով:

Եւ 8. Յօրէլեան տօն, որով ամեն յիսու-

նական տարուց յետոյ, ամենայն ոք ընդ-
հանրապէս, ինչ առնելիք որ ունենար ուրի-
շից՝ պէտքէ բոլորովին նուիրէր և թողնէր
նորան իւր ամեն առնելիքը և պարտքը և
ուրիշ տօնէր:

Իսրայէլացւոց Աստուածալաշտութեան
սրբազն գործողութիւններն էին:

1. Ողջակէղ՝ որ բոլորովին այրում էին
զոհը:

2. Փրկութեան և խաղաղութեան զոհ, որ էր
նշան շնորհակալութեան՝ Աստուածանից
ընկալած բարերարութեան համար:

3. Քառո-նէան զոհ, որ կատարում էին
ակամայ և անգիտութեամբ գործած մեղ-
քից սրբուելու համար:

4. Հանապաղորդեան ողջակէղ, որ ամեն ա-
ռաւօտ և երեկոյ մատուցանում էին:

Եւ 5. Նու-էր+, իսմ անարի-ն զոհ, որ էր
շարմաղ ալիւր, ցորենի նոր հասկ բոված,
իւղ, գինի, աղ, կնդրուկ կամ խոնկ:

Իսրայէլացւոց սրբազնագործ պաշտօնեա-
ներն էին:

1. Քահանայապետ.

2. Քահանայք, որոնք Ահարօնի ցեղիցն էին, նրանց գործն էր զոհագործութիւն անել և խունկ ծխել վկայութեան խորանում:

Եւ 3. Ղետացիք, որոնք խորանի հասարակ ծառայողներն էին:

Աստուծոյ ազգմամբ, Մովսէսի աջակցութեամբ Ահարօն կարգի և կանոնի տակ դրեց Աստուծոյ Եկեղեցին, և ինքն վախճանեցաւ 123 ասրեկան Հովք լերան վերայ, որին յաջորդեց իւր որդի Եղիազար:

33.

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ:

Խորայէլացիք սովորած լինելով ստրկութեան, երբէք չէին զգում ազատութեան իրաւունքը և պատիւը, Աստուծոյ արածքարերարութիւնները: Նրանք միշտ տրամա-

ջումէին Մովսէսի վրայ, յիշում էին Եգիպտոսի սոխ ու սիտորը, ձմերուկը, միոր, հացը, բայց ոչ երբէք քաշած չարչարանքներն ու նեղութիւնները: Նրանք չըհասկացան Աստուծային խնամքը, որ ոչինչ պակաս չէր նրանցից ճանապարհորդութեան ժամանակ: Նրանք ամենեին մոքելը չէին բերում որ Աստուծ Երկնային համեղաճաշակ հանանայ տեղացուց ու կերակրեց նրանց, ապառաժ քարից՝ ջուր բղխեցրեց. Ժամանակին մովկերակրեց: Մինչեւ անգամ նրանք ընկան և կռապաշտութեան մէջ, Երկրապահութիւն տուին ոսկէ հորթին: Թէպէտ Աստուծ զանազան տեսակ մահով պատժեց նրանց, բայց նրանք մնացին անզգացողութեան մէջ, և մինչեւ անգամ նրանց վրայ թիւնաւոր օձեր ուղարկեց, որ խայթելով սպանում էին ժողովրդոց. բայց Մովսէս ինչպէս շատ անգամ, նոյնպէս և այս անգամ Աստուծոյ գիւեց և նրա հրամանով մի ողջ ձէ օձ ձուլեց ու կանգնացրեց, որ նրան մոիկ տալով թունաւորուածները իոկոյն բժշկվում էին:

Վերջապէս Աստուած վճռեց որ, Եգիպտոսից դուրս եկողները, քսան տարեկանից բարձր լինողները—բացի Յեսուն և Քաղէթ, քառասուն տարի թափառական շրջին Արաբիայի ապառաժուտ անապատի մէջ, մինչեւ որ մեռնին բոլորը և ապա մնացածները, այն է նոր սերունդը մտնեն Աւետետցերկիրի սահմանները:

Մովսէս, Յեսու և Քաղէթ իրենց յոյսը Աստուծոյ վրայ դրած՝ յորդորում էին ժողովրդեան, պատերազմելով առաջ գնալ, որև յաղթեցին այլազդիներին՝ Եգովմայեւոց, Քանանացւոց, Մովսացւոց, Ամովհրացւոց և այլոց, մինչեւ որ հասան Յորդանան գետի ափը:

34.

ՀՐԵՒՑ ԱԶԳԻ ԱԽԵՏԵԱՅ ԵՐԿԻՐ ՄՏՆԻԼ
ԵՒ ՅԵՍՈՒ ՆԱԽԵԱՆ:

Մովսէս հարիւր քսան տարեկան հասակում Աստուծոյ հրամանով ընտրեց իւր փո-

խանորդ Իսրայէլի առաջնորդ Նաւիայի որդի Յեսուին որ իւր աշակերտն էր. և ինքը ժողովուրդը յորդորեց որ Աստուծոյ հաւատարիմ մնան, և յետոյ Նաբաւ լեառը բարձրացաւ, ու այնտեղից օրհնեց բոլոր ժողովուրդը և հեռուից տեսաւ Աւետեաց երկիրը, և մեռաւ. որի մարմինը անյայտ մնաց:

Մովսէսից յետոյ Յեսու յոյսը Աստուծոյ վրայ դրած, պատերազմելով յաղթեց Յորդանան գետի Երկու կողմի ազգերին, և ժողովուրդը անցկացրուց Յորդանան գետից հրաշքով, Տապանակի, Քահանայից և Իսրայէլի ծերերի առաջնորդութեամբ, և տիրեցին Քանանացւոց բոլոր Երկրին, որ կոչվում է Պաղէստին:

Իսրայէլացիք՝ Գաբաւոնացւոց հինգ թագաւորի վրայ գնացին պատերազմեցան, Յեսու Աստուծոյ ազօթեց, արեն ու լուսինը կանգնեցին. օրը Երկարեցաւ մինչեւ որ Երիքով ամուր և պարսպապատ քաղաքին տիրեցին:

Յեսու քոլոր նուաճեալ երկիրները քա-
ժանեց Խորայէլացւոց տամներկու ցեղին,
որոնց թուումն էին Եփրեմը և Մանասէն:

Այսպէսով կատարուեցաւ Սբրահամին
տուած Աստուծոյ խոստումը, թէ զաւակի
քում տաց զերկիրս զայս. և Նոյի անէժքը
Քանանի վերայ:

Դեիի ցեղը ընտրուած էր՝ վկայութեան
խորանին սպասաւորել և ժողովրդից տա-
սանորդ ստանալ, վասն որոյ նոքա հողային
Ժառանգութիւն չստացան միւս ցեղերի
հետ, նոյն Աւետեաց երկրում:

Խորայէլացիք ռոլորն իմիասին Սելոմ քա-
զաքը ժողովուեցան, վկայութեան խորանը
այնտեղ հաստատեցին. և Յեսու խորին ծե-
րութեան հասած հարիւր տամն տարեկան
վախճանուեցաւ:

35.

ԴԱՏԱԻՈՐԱՅ ԺԱՄԱՆԱԿ:

Յեսուի մահից յետոյ քիչ ժամանակ կա-
ռավարեց ազգը ծերակոյտը և ապա ընտր-
ուեցան դատաւորներ, որոնց ժամանակ Խո-
րայէլացաքիք շատ յաջողակ էին քանի որ
իրենց հայրենի կրօնին հաւատարիմ էին,
բայց երբ Աստուծոյ ձանապարհից գուրս
էին գալիս, այն ժամանակ թշուառութիւն-
ներ և նեղութիւններ էին կրում իրենց
շուրջը գոնւող կռապաշտ ազգերից:

Հրէայք հեթանուների հետ ինամութիւն
անելով մոռացան ձշմարիտ Աստուածը և
պաշտեցին Բահաղը (արեգակ) և Աստար-
ալ (լուսին):

Աստուած Խորայէլացւոց ազգը իսպառ
ը կորցնելու համար ժամանակ ժամանակ
յարուցանում էր աստուածային ոգով քա-
ջալերուած դատաւորներ Խորայէլի համար,
որոնք ազատում էին ազգը կռապաշտների
լծի տակից և հաստատում էին ձշմարիտ

Աստուածպաշտութիւնը, և կառավարում
էին աղքը մինչև իրենց մահը:

Իսրայէլացիք ունեցան տասներկու դա-
տաւորներ.

1. Գողոնիէլ.
2. Աւովզ.
3. Դեբովրա (կին մարդարէուհի).
4. Բարակ.
5. Գեղէօն.
6. Արիմելէք.
7. Թովզա.
8. Յայիր.
9. Յեփթայէ.
10. Սամոն.
11. Հեղի.
12. Սամուէլ:

Դատաւորաց մէկ քանիսի նշանաւոր
գործքերը:

Բարակ. Քանանացւոց Յարին թագաւորի
ձեռքից ազատեց Իսրայէլացիք:

Գեղէօն. յաղթեց Մադիամացւոց առանց
զէնքի,

Յէդիայէ. Ամսնացւոց յաղթելու ժամա-
նակ ուխտ գրեց Աստուծոյ ու կատարեց
վերագառնալիս, իւր սիրելի միակ գուստրը
զոհեց:

Սամոն. (Նազովրեցի) Աստուծոյ ուխտա-
ւոր էր, Փղշտացի թշնամիներին յաղթեց
առանց զէնքի, միայնակ, նրա ոյժը բնակա-
նից դուրս էր և մազերի մէջն էր, գինի,
արագ չէր խմած, նրա գլխին ածելի չը պի-
տի գիպչէր:

1. Սամոն Փղշտացւոց վրայ բարկանալով
երեք հարիւ աղուէս բռնեց ու երկու եր-
կու միմեանց հետ պոչերից կապեց, մէջտե-
ղ վառած ջահէր ամրացուց, ու բաց թո-
ղեց Փղշտացւոց ցորենի արտերի մէջ, որով
նրանց հասած ցորենի հասկերը, այգիները
ու ձիթենիները այրուեցան ու մոխիր գար-
ձան:

2. Յուգայի ցեղը Փղշտացիներից վախե-
նալով, բռնեցին Սամոնին, հաստ պարանով
կապեցին ու նրանց ուղարկեցին: Երբ Սամ-
ոնին կապած բերին Փղշտացիների առաջ,

նա իսկոյն պարանները կտրեց ու այնտեղ
ձեռքը ընկաւ մի իշխ ծնօտ՝ նրանով հազար
մարդ սպանեց:

Յ. Փղշտացիք Գաղա քաղաքի ամուր
գոների մօտ, պահապաններ կանգնացրին,
որ դուրս գնալիս նրան բռնեն ու սպանեն,
բայց Սամսոն կէս գիշերին քաղաքի դուռը
իւր սեմովն ու նիգովը տեղից հանեց, շա-
լակած տասն ժամու ճանապարհ հեռու՝
մի լերան գլուխ ձգեց ու գնաց:

Ի վերջոյ Փղշտացիք Սամսոնին ձեռք ձգե-
ցին, նրա Դալիլա կնոջը կաշառելով: Այս
ընտրուած մարդը ցոյց տուեց իւր օրինա-
կով. թէ մեծ և հզօր մարդիկ ենթարկուած
են և մեծ թուլութեան: Այս թշնամիների
աշարկուն յաղթուեցաւ իւր կնոջից՝ նրա
լացին ու աղաչանիքին ակսնջ գնելով, յայտ-
նեց նա իւր ոյժի գաղտնիքը, որ իւր մա-
զերի մէջն է: Կի՞ Սամսոնի քնած ժամա-
նակ ածիլել տուեց նրա գլուխը, և նրան
մատնեց թշնամիների ձեռքը, նրանք էլ
նրան շղթաներով կտպեցին ու աչքերը կու-

րացրին, ու ալիւր էին աղալ տալիս:

Մէկ անգամ՝ Փղշտացի նախարարները
ժողովուած իրենց չաստուածի տօնն էին
կատարում, Սամսոնին էլ բերել տուին որ
նրանով զուարձանան: Սամսոն Աստուածա-
նից իւր առաջուայ զօրութիւնը խնդրեց,
աան շինուածքի երկու սիւնը գրկեց ու
շարժեց, տունը փուլ եկաւ, և ովքեր որ
կային տան մէջ և տանիքի վրայ բոլորն էլ
մեռան ու ինքն էլ նրանց հետ:

Հեղի և Սամուել թէ դատաւոր և թէ
քահանայապետ էին, վերջինս մարդարէ և ո
էր: Հեղիի ժամանակ Տապահակը Փղշտա-
ցոց ձեռքը գերի ընկաւ: Սամուելի ժամա-
նակ Փղշտացիք ստիպուեցան Տապահակը
յետ գարձնել, նոր սայլի վրայ դրած, երկու
երինջները ուղիղ Բեթսամիս բերին Տապա-
հակը:—Տեղացիները երբ Տապահակի վերա-
դարձնելը լսեցին շատ ուրախացան. բայց
նրանց ուրախութիւնը շատ տրումութեան
փոխուեցաւ, երբ նրանք օրինաց դէմ հե-

տաքրքրուելով, առանց ծածկոյթի Տապանակին սկսեցին մոխի անել՝ յիսուն հազար (50,000) հոգի ընկան ու մեռան:

36.

ՀՐԵՒՑ ԱԶԳԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱԽՈՐՆԵՐԸ.
ՍԱԽՈՒՂ, ԴԱԻԻԹ ԵՒ ՍՈՂՈՄՈՆ:

ԲԵՆԻԱՄԻՆԻ ցեղից Կիսիայի որդի Սաւուղին Սամուէլ (Քաջանայապէտ, մարգարէ և դատաւոր). Աստուծոյ հրամանով թագաւոր օծեց: Սաւուղ Աստուծոյ հրամանին հակառակ վարուեցաւ, և Սամուէլ յայտնեց նրան Աստուծոյ վճիռը, թէ նրա թագաւորութիւնը կը խլուի նրա տանից, և ուրիշն կը տրուի, և նրա կենդանութեան ժամանակ՝ Սամուէլ Աստուծոյ հրամանով օծեց Յուղայի ցեղից Յեսուի որդի Դաւիթին Խարայէլի թագաւոր:

Այս պատճառով Սաւուղ հալածում էր

Դաւիթին, և Դաւիթ շրջում էր թափառական մինչև Սաւուղի սպանութելը Փղշտացւոց պատերազմում:

Սաւուղի մահից յետոյ Դաւիթ Սամուէլից կրկին հանդիսով օծուեցաւ թագաւոր Քերոնում, և իւր բնակութեան տեղը ընտրեց Երուսաղէմ, իսկ Սիօն կոչուած սարը, արաւ թագաւորանիստ և փոխագրեց այնտեղ Տապանակ—Ուխտին:

Դաւիթ հնագանդեցրեց իւր իշխանութեան ներքոյ շրջակայ թշնամի ազգերը, և երկիրը խաղաղութեան մէջ էր: Նա պատերազմի մէջ՝ սպանել տուեց Ուրիա Քետացուն և նրա Բերսաբէ կինը առաւ իրեն կին, որից ծնաւ Սողոմոն: Նա այս յանցանքի համար կրեց զանազան թշուառութիւններ և ամենից աւելի իւր որդի Աբիսողոմից:

Դաւիթ թէպէտ ընկնում էր յանցանքի մէջ, բայց միենոյն ժամանակ ապաշխարում էր և ջերմեռանդ ու Աստուծանից վախեցող էր, ունէր և մարգարէական հո-

գի, ապացոյց է Ասպահու կոչուած գիրքը։ Նա
պատրաստեց Աստուծոյ Տաճարի շինութեան
նիւթերը, զոր նրա որդի Սողոմոնը շինեց։

Դաւիթ չը մեռած թագաւորութիւնը Սո-
ղոմոնին յանձնեց, որ տասներկու տարեկան
էր երբ Աթոռ նստաւ։ Նա Աստուածանից
միայն իմաստութիւն խնդրեց և ստացաւ։

Սողոմոնի իմաստութիւնն մէ օրինակը.

Մէկ անգամ երկու կին նրան ներկայա-
ցան, և գառաստան էին խնդրում, մինն
տառւմ էր, երկուս մի տան մէջ երեխայ
ծնեցինք՝ գիշերը։ քնի մէջ, սա իւր երեխի
վրայ պառկելով մեռցրել էր, և բերել իմ
կենդանի երեխիս հետ փոխել։ Իսկ միւսը
հակառակն էր պնդում, որ կենդանին ի-
րենն է։

Սողոմոն երեխայի իսկական մայրը ով լի-
նիլը իմանալու համար, հրամայեց որ, կեն-
դանի երեխային՝ որով միջից կես անեն ու
երկուսին բաժանեն։ Նրանցից մինը այս
հրամանից սարսափած, աղաջում էր որ,

մանկանը չսպանեն, այլ կենդանի յանձնեն
իւր հակառակորդին։

Սողոմոն իսկոյն հրամայեց որ երեխային
նրան տան, հաստատ իմանալով որ երեխայի
իսկական մայրը նա է, որ երեխայի սպան-
ուիլը չէ կամենում։

Սողոմոնի ժամանակ Խորայէլի թագաւո-
րութիւնը շատ զօրացաւ, ընդարձակուե-
ցաւ և հարստացաւ։ Նա իւր թագաւո-
րութեան չորրորդ տարին սկսեց շինել Աս-
տածոյ համար հոյակապ ու փառաւոր Տա-
ճար, և եօթը տարուայ մէջ աւարտեց։ և
երբ Տապանակ — Ուխտին մեծ հանդիսով
փոխագրում էր նորբաշէն Տաճարը, Աս-
տաւած զարմանալի նշանով այս Տաճարի
վրայ իւր հաճութիւնը ցոյց տուեց։ Հան-
դիսի ժամանակ լուսաւոր ամայ երեկցաւ
և բոլոր Տաճարը լցուեցաւ, երկնքից կրակ
իջաւ մատուցած ողջակեզներն այլեց։ Տա-
ճարի նաւակատիքը եօթն օր տեսեց, այդ
միջոցին ուան Երկու հաղաք Եղ, և հարկու ուան
հաղաք ոչխար զրհեց Հրէայ ժողովուրդը

Աստուծոյ համար :

Այս բարեպաշտ և իմաստուն թագաւորին՝ իւր կռապաշտ և օտարազգի կանայքը մօլորեցրին ճշմարիտ Աստուածանից, նա նրանց սիրոյն համար շինեց և կռքերի մեհեաններ։ Դրա համար Աստուած նրա թագաւորութիւնը բաժանեց, նա քառասուն տարի թագաւորութիւն անելուց յետոյ մեռաւ,

Սողոմոնին յաջորդ եղ նրա որդին Ռոբովամ, սրա ժամանակ թագաւորութիւնը երկուս բաժանուեցաւ, Յութայի և Խոյայէլի Ռոբովամ իշխեց միայն երկու ցեղին, և նրա ծառայ Յերոբովամը՝ տասը յեղին։

37.

ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՎԻՈՐՈՒԹԻՒՆԸ :

Յուդայի թագաւորութիւնը Դաւթի ցեղին էր, թէպէտ փոքր էր, բայց աւելի

պատուաւոր, որովհետեւ նրա ձեռքն էր Տապանակ—Ուխտին և Տաճարը, և ամեն Հրէայ պարտական էր տարին մի անգամ գնալ Երուսաղէմ, Տաճարին իւր նուէրը մատուցանելու։

Իսրայէլի թագաւորութիւնը աւելի բազմամարդ, ընդարձակ և զօրաւոր էր։

Յուդայի թագաւորութիւնը շարունակուեցաւ երեք հարիւր եօթանասուն հինգտարի, մի դար աւելի տեսեց քան Իսրայէլի թագաւորութիւնը. Յուդայի թագաւորութեան գահի վրայ նստեցան քսան թագաւորներ, նրանց մէջ արժանաւորներն և Աստուածապաշտները միայն վեցն էին։ Ասա, Յովսափատ, Ոզիա, Յովաթամ, Եզէկիա և Յովսիա. մնացածները անբարոյականներ, Աստուածուրացներ և կռապաշտներ էին։ Աառաջինների թագաւորութիւնը էր տեսողական և նշանաւոր ներքին բարեկարգութեամբ, ճշմարիտ Աստուածապաշտութեամբ և փառաւոր յաղթութիւններով՝ արտաքին թշնամեաց վրայ, մնացածնների

գահակալութիւնը էր ըստ մեծի մասին
կարձ ժամանակով և անքաղդութեամբ,

Թագաւորների ճշմարիտ Աստուածպաշ-
տութիւնից հեռանաւը, և ժողովուրդի մո-
լորութիւնները պատճառ եղան Յուդայի
թագաւորութեան ընկնելուն։ Նաբուգո-
դոնոսոր Բաքելացւոց թագաւորը քանդեց
երուսաղէմը, յափշտակեց Տաճարի սուրբ
անօթները, և Յուդայի ազգը գերի տարաւ
Բաքելոն, ուր մնացին նրանք եօթանասուն
տարի։

38.

ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ։

Իսրայէլի թագաւորութեան Աթոռը Սա-
մարիայ էր, որ տեղ երկու հարիւր քա-
ռասուն և չորս տարի։ Նրա առաջին թա-
գաւորն էր Եփրեմի ցեղից Յերոբովամ։ Սա
վախեցաւ՝ չը լինի թէ կրօնը՝ որ կապել էր
իւր հպատակների՝ Երուսաղէմի հետ, կը կի՞ն

Յուդայի թագաւորութեան հետ միացնէ
նրանց։ Նա այս երկիւղը փարատելու հա-
մար՝ մոածեց ձգել ժողովրդի մէջ կրօնա-
կան բաժանմունք, և ձուլել տուեց երկու
ոսկէ երինջներ, և դրեց մինը Բէ՛նէլ։ Ե
միւսը Դան, և սահմանեց նրանց համար ա-
ռանձին տօներ, առանձին քուրմեր, և ա-
սաց ժողովուրդին։ (Կ'սրայէլ ահա օրանք
են քո աստուածներդ, որ քեզ Եգիպտոսից
հանեցին)։

Ժողովուրդը, որ հակամիտ էր գէպի
կռապաշտութիւն, մեծ մասը պաշտեցին
յիշեալ կռքերը, և Խորայէլի թագաւորու-
թեան մէջ տարածուեցաւ կռապաշտու-
թիւն, և նրա տասն և ինն թագաւորների
մէջ չը գտնուեցաւ տաւաքինի ու աստուա-
ծապաշտ մէկը, և ամենքն էլ հետեւեցան
Յերոբովամի օրինակին, և էին կռապաշտ-
ներ ու մոլիներ։

Աստուած շատ անգամ իւր ընտրած մար-
գարէների ձեռքով (որոց մէջ երեւելի էին
Եղիշ և Եղիսէ), խրատում էր ժողովուր-

գը, յետ գառնալ իրենց չար ճանապարհից,
բայց ոչ ոք լսող չեղաւ. դրա համար էլ Աս-
տուած մատնեց նրանց Ասորեստանի Սաղ-
մանասար թագաւորի ձեռքը, որ քանդեց
Սամարիան և ուրիշ քաղաքները: Խորայէ-
լացիք իրենց թագաւոր Ովսիայի հետ գերի
գնացին Ասորեստան և բնակուեցան Եփ-
րատի միւս կողմի:

Սամարիան իւր բոլոր քաղաքներով ու
գիւղերով մնաց անմարդաբնակ, Սաղմանա-
սար լցրուց այդ երկիրը քաղթականներով,
ուղարկեց Բաբելոնից, Ասորեստանից և Մի-
ջագէտքից, որ եկան ու բնակուեցան Սա-
մարիայում, և միւս անմարդաբնակ քա-
ղաքներում, բայց երկիրը երկար ժամանակ
անմարդաբնակ լինելու պատճառով դար-
ձել էր քաղանների բնակարան, որոնք մեծ
վնաս էին հասցնում նորեկ քաղթականնե-
րին: Նրանք այս վերագրում էին Խորայէլի
Աստուածոյ բարեկութեանը, որ չէին պաշ-
տում, որա համար, խնդրեցին Սաղմանա-
սարից, որ ուղարկէ իրենց համար Հրէայ

քահանայ, որ սովորեցնէ իրանց Խորայէլի
Աստուածոյ պաշտօնը: Ուղարկուած քոհա-
նայն բնակուեցաւ Բէնելլում, և սովորեցնում
էր թէ ի՞նչպէս պէտք է ծառայել Հրէից
Աստուածուն և Մովսէսի օրէնքներին: Նրանք
յօժարութեամք ընդունեցին Ճշմարիտ Աս-
տուածոյ հաւատը, բայց միւնքն ժամանակ
խառնեցին նրա հետ և իրենց մնապաշ-
տութիւնները, և գուրս եկաւ այն խառը
կրօնը, որ յետոյ կոչուեցաւ Ասմարացինէլի
աղանդ: Ժամանակից յետ Տաճար շինեցին
Գարինին սարի վրայ, և ունէին առանձին
քահանայապետ և քահանաներ, որոնք ի-
րենց կարծում էին Ահարօնի սերունդ:

39.

ԻՍՐԱՅԻԼԱՑԻՔ ԲԱԲԵԼԱՑԻՈՑ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԲՈՅ

Նախուգոգոնսոր տիրելով Հրէաստա-
նին, գերեց Խորայէլացիք, տարւ Դրանց և

ցրուեց Բաբելացւոց աշխարհի զանազան կողմերը, և մեծ բազմութիւն բնակեցրուց Քօքար գետի ափում։ Խորայէլացիք օտարութեան և թշուառ վիճակի մէջ նզովում էին այն ամեն իրենց վրայ եկած ապարազտութեանց պատճառները, և սրտի զգացմունքով թափում էին արտասուք՝ միտ բերելով նրուսադէմը։

Աստուած տեսաւ նրանց ջերմեռանդ պաշխարանքը՝ կակզացրուց Նաբուգոդոնոսորի սիրտը, որ այնուհետեւ սկսեց գթութեամբ վարուիլ գերի Հրէաների հետ, թոյլ տուեց նրանց համարձակ պաշտել իրենց հաւատը, հող գնելու և իրենց սռվորութեամբ դատաւորներ ունենալու իրաւունք տուեց։ որ իրենց բոլոր գործերը վճռեն՝ իրենց հայրենի օրէնքով, և նրանցից շատերը ստացան պաշտօններ տէրութեան մէջ։ Նաբուգոդոնոսոր իւր այսքան բարեսրտութեան հետ, հրամայեց, որ Հրէից երեկոի ցեղերից ընտրեն ուշիմամիտ պատահիներ, նրանց սովորեցնեաց մէջ

Քաղդէական գպրութիւնը, որոց մէջ երեւելի գտնուեցան Անանիա, Ազարիա և Միսայէլ, և նրանց Քաղդէական անուններ գրեց, Սեղբակ, Միսակ և Աբէդնագով։ Դանիէլ արժանացնաւ Աստուածային յայտնութեան, որ թագաւորի երազը մեկնեց, զոր Բաբելոնի իմաստութիւններից ոչ մինը չէին կարացել պատմել ու մեկնել՝ մինչեւ որ Հեթանոս թագաւորը զարմացաւ այս իրողութեան վրայ՝ և յայսնապէս գաւանեց թէ «Ճշմարիտ Աստուածը, միայն Հրէից Աստուածն է, և ուրիշ ոչ ոք, նա է Տէրերի Տէրը և թագաւորների թագաւորը»։ և Դանիէլին կարգեց կառավարիչ և գլուխ Բաբելոնի իմաստուններին, իսկ նրա երեք ընկերները՝ նրա օգնական, և այսպէս ստացան Հրէաները իրաւունք համարձակ պաշտելու ճշմարիտ և սուրբ հաւատը։

Հեթանոս աշխարհում ճշմարիտ Աստուածպաշտութիւնը աւելի համարձակութիւն գտաւ այն ժամանակի, երբ Սեղբակ, Միսակ և Աբէդնագով երկրպագութիւն չը

տուին Նաբուգոդոնոսորի պատկերին, երբ
երես առ երես անարգեցին նրա հրամանը
և այս պատճառով ընկան բորբոքեալ հնոցի
մէջ, նախախնամութիւնը պահեց նրանց
անվնաս, մինչեւ որ թագաւորը անձամբ տե-
սաւ, և նրանց հետ էլ չորրորդ անձը, որ
նմանացրեց Աստուածորդուն, ուստի և հրո-
վարտակով և պատժով արգելեց իւր տէ-
րութեան մէջ, որ ոչ ոք չը համարձակուի
հայՀոյել Հրէից Աստուածը: Եւ այսպէսով
հեթանոսական աշխարհում ճշմարիտ Աս-
տուածպաշտութիւնը բարձր համարուեցաւ
քան թէ հեթանոսութիւնը:

Հրէաները ախ ու վախ քաշելով սպա-
սում էին խոստացած Մէակայի գալուն և
նոյնը քարոզում էին:

40.

ՏՕԲԻԹ ԵՒ ՆՐԱ ՏՕԲԻԱ ՈՐԴԻՆ

Խօրայէլի թագաւորութիւնը կործանուե-
լուց յետոյ Սաղմանասարի ձեռքով, Տօբիթ

ուրիշների հետ գերի գնաց նինուէ, և պա-
տուուած էր Ասորեստանի թագաւորից՝ օգ-
նում էր իւր հայրենակիցներին, հոգալով
նրանց պակասութիւնները և թաղում էր
անուէր մեռածները: Մէկ դիպուածով նրա
աչքերը կուրացան, և այս պատճառ դար-
ձաւ նրան իւր ունեցած հարստութիւնից
զրկուելու:

Տօբիթ ունէր մէկ որդի՝ որի անունը Տու-
բիա էր, հայրը նրան կրթում էր Աստուած-
պաշտութեան և բարոյականութեան մէջ,
և տուեց նրան այս խրատները:

« Որդ եակ. բոլոր կեանքումդ միշտ յիշէ
քո Տէր Աստուածը, պահիր նրա պատուի-
րանքները, անիրաւութիւն չանես. եթէ
ճշմարտութիւն և արգարութիւն գործես,
քո ամեն բանդ յաջող կը լինի: »

« Աղքատներին ողորմած եղիր, որ Աս-
տուած էւ քեզ ողորմի. գիտացէր, որ ողոր-
մութիւնը մահից կը փրկէ: »

« Բարի վարք ունեցիր, և ողջախոհ եղիր.
օտարազգի կին չուզես և աղջիկ չը տառ

նրան, այլ մեր ազգից առ, և տուր:

«Մշակի վարձը մօտդ չը պահես, այլ նոյն օրը տաս:

«Մի անիր ուրիշին այն բանը, ինչ որ չես ուզում անէ քեզ ուրիշը:

«Գինի շատ չը խմես, որ արբենաս:

«Քաղցածներին հաց տուր և տկլորներին՝ շոր:

«Խելօք մարդու միշտ խորհուրդ հարցրու և այլն»:

Հօր այս խրատները խոր տպաւորուեցան Տուբիայի սրտի մէջ:

Յետոյ Տուբիա իւր ծնողաց խորհրդով, հրեշտակի առաջնորդութեամբ, գնաց Եկեղատան քաղաքը իւր ազգականի մօտ, և պսակուեցաւ նրա ազջկայ հետ: Ապա ստացաւ իրենց պարտականից տասն տաղանդարձաթը, և վերադարձաւ իւր հօր մօտ, և հրեշտակի ցոյց տուած ձկան լեզին, ածելով իւր հօր աչքերի վրայ, իսկոյն նրա աչքերը բացվում են: Տուբիա իւր հօր նման առաքինի էր. և աղքատներին ողոր-

մած, սրա համար էլ, սրանք հայր և որդի արժանացան Ա. Գրքի մէջ յիշատակութեան տեղ ունենալ:

41.

ՅՈՒԴԻԹԻՑ:

Բաբելոնց Հողեփեռնէս զօրավարը պաշարեց Հրէից Բետեղուայ ամուր քաղաքը. քաղաքի բնակիչները ընկան ահուգողի մէջ: Այդ քաղաքում բնակվում էր Յուդիթ անուն՝ մէկ այրի, գեղեցիկ, բարեպաշտ և սրտոտ կին, նա տեսնելով իւր քաղաքցւոց տագնասն ու երկիւղը, և մօտիկ վտանգը թէ քաղաքին և թէ բնակիչներին, սկսեց քաջալերել քաղաքացիներին, որ փոքր ժամանակ նեղութեան համբերեն և Աստուած շուտով կազմառէ իրանց: Նա ապաւինելով Աստուծոյ, իւր սգոյ շաբերը հանեց, հագաւ իւր հարսնութեան շորերը, և գնաց Հողեփեռնէսի մօտ ու ասաց, որ ինքը քա-

Ղաքին տիրելու Հնարքը կարող է գտնել։
 Հողեփեռնես Յուղիթի գեղեցկութիւ-
 նից գրառւելով սիրահարուեցաւ։ Մի գիշեր
 երբ արբած պառկած էր անկողնի մէջ։
 Յուղիթ տեսաւ որ թշնամին սպանելու
 յարմար և լաւ ժամանակ է, առաւ նրա
 թուրը, խնդրեց Աստուածանից ոյժ, և
 իւր բոլոր զօրութեամբը խփեց նրա վզին
 ու կտրեց գլուխը, դրաւ պարկի մէջ, ու
 տուեց իւր նաժիշտներին և հեռացաւ գի-
 շերով թշնամու բանակից՝ երբ բոլորը
 քնած էին։ Ուրախութեամբ մտաւ քա-
 ղաք, ցոյց տուեց քաղաքացիներին նրանց
 սարսափեցնող թշնամի զօրավարի գլու-
 խը, և նրանք միւս առաւօտը յարձակ-
 ուեցան թշնամիների վրայ. ու սկսեցին
 կոտորել ու հալածել. այսպէս մէկ տկար
 կին յաղթեց թշնամիներին, ազատեց իւր
 հայրենիքը, և իւր քաջարտութեան հա-
 մար փառաւորուեցաւ իւր հայրենակիցնե-
 րից և տիրացաւ բանակում ունեցած Հո-
 ղեփեռնէսի կայքին ու գանձին, ու արժա-

նացաւ տեղ ունենալ Ս. Գրքի մէջ իւր
 անունը յիշատակելու։

42.

ՀՐԵԱՆԵՐԸ ՊԱՐՍԻՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ
 ՆԵՐՔՈՅՑ։

Պարսից Կիւրոս թագաւորը Բաքելոնին
 և բոլոր Արևելքին տիրեց, և կատարուե-
 ցաւ Երեմիա մարգարէի գուշակութիւնը,
 թէ Հրէաները եօթանասուն տարի գերի
 մնալուց յետոյ կազատուին։

Կիւրոս իւր թագաւորութեան առաջին
 տարին հրաման արձակեց իւր բոլոր տէրու-
 թեան մէջ, որ Աստուած իրեն տալով երկրի
 թագաւորութիւնը, հրամայել է որ Երու-
 սաղէմի Տաճարը շինէ, որի համար արձա-
 կեց բոլոր Հրէայ գերիները, որ գնան իրենց
 հայրենիքը, իսկ տեղական բնակիչներին,
 որոց մէջ գտնվում էին Հրէաներ, հրամա-
 յեց օգնել նրանց, որչափ կարող են։

Կիւրոս նաև վերագարձրուց Հրէից Երուապէմի Տաճարին պատկանած շատ անօթներ, որոնք պահվում էին Բարելոնի Արքունիքում:

Հրէայք Զօրաբարէլի (որ Դաւթի ցեղիցնէր.) և Յեսու Քահանայապետի առաջնորդութեամբ շարունակեցին իրանց ճանապարհը դէպի Երուսաղէմ, քառասուն Երկու հազարից աւելից այր մարդ, թող ծառաները: Իսկ Դանիէլ մարգարէն մնաց Բաբելոնում ու չը տեսաւ իւր հայրենիքը, բայց տեսաւ տեսիլքի մէջ Աստուածային քաղաքի վիճակը մինչի Քրիստոս:

Յեսու և Զօրաբարէլ շինեցին զոհագործութեան սեղանը. ապա ձգեցին Տաճարի հիմը մեծ հանդիսով: Սամարացիք առաջարկեցին Հրէից՝ ընդունիլ և իրանց օգնութիւնը, բայց ստացան բացասութիւն. ուստի ամեն կերպ աշխատում էին խափանել Տաճարի շինութիւնը, սակայն նրանք շինեցին Տաճարը, Յնդէաս և Մաղսքիա մարգարէների յորգորմամբ, իսկ Ալբո-Շին Ալբո-

Խորանիը մնաց դատարկ, Տապանակի անհետանալու պատճառով:

Կիւրոսի յաջորդներից Արտաշէս թագաւորը նոյնպէս խնամք ունէր Հրէից վրայ. նա հրաման տուեց Եղրաս քահանային տանել մնացած Հրէաները Երուսաղէմ, նրանց ցանկութեան համաձայն. և դարձրեց Տաճարի մնացած անօթները՝ որ յափշտակել էր Նաբու-գորոնոսոր, և հրաման արձակեց՝ Եփրատից այն կողմը գտընող գանձապահների վրայ, որ Տաճարի հարկաւորութեան համար, պէտք եղած գանձը տան:

Եղրաս ստացաւ նաև թագաւորից իրաւունք, վերահասու լինելու օրէնքի պահպանութեան վրայ, պատժել օրինազանցները, կարգել վերակացուներ և գատաւորներ՝ բարեկարգութեան:

Եղրաս հազար եօթն հարիւր Հրէաներով վերադարձաւ Երուսաղէմ, ժողովեց Հրէաները և համոզեց նրանց որ, որոնք հեթանոս կին ունին, արձակեն և բոլորովին

կտրեն նրանցից իրենց յարաբերութիւնները, որ չը շարժի Աստուածային բարկութիւնը իրանց վրայ:

Երուսաղէմի պարիսպը քանդուած էր, և ապահով չէր շրջակայ թշնամիներից: Նէ-եմի անուամբ մէկ հրէայ կար, որ Արտաշէս թագաւորի սիրելին ու պալատականն էր, սա ստացաւ թագաւորից հրաման Երուսաղէմի պարիսպը շինելու, և հրովարտակ՝ տեղական կառավարիչների վրայ, որ թագաւորական անտառից փայտ տրուի պարսպի շինութեան համար, որքան և պէտք լինի:

Նէեմի եկաւ Երուսաղէմ՝ լիսկատար իրաւունքով, և յազթեց ամեն դժուարութեանց և յիսուն երկու օրում շինեց Տաճարի պարիսպը:



43.

ԵՍԹԵՐ:

Պարսից իշխանութեան ժամանակ գերի Հրէաների մէջ կար մի օրիորդ Եսթեր անուն, սա Արտաշէս թագաւորի Հրէայ Մուրթքէ պալատականի ազգականն էր, Եսթեր ինչպէս որ արտաքին դէմքովը գեղեցիկ էր, նոյնպէս և հոգւովը կրթուած էր ճշմարիտ աստուածպաշտութեան մէջ, և բաղդն այնպէս քերեց, որ նա դարձաւ Մուրթքէի հաճութեամբ Արտաշէսի կին, և այսպէսով նա ունեցաւ միջոց պաշտպանել իւր հայրենակիցներին:

Համան՝ Արտաշէսի առաջին նախարարը սաստիկ ատում էր Մուրթքէին, իրան երկրպագութիւն չը տալու համար, և հրաման ստացաւ նա թագաւորից, որ իւր թագաւորութեան մէջ գտնուող բոլոր Հրէաներին սպանէ, որպէս կասկածաւոր և ապստամբ ազգ, որ Մուրթքէն էլ նրանց հետ սպանուի, ուստի և պատրաստեց կա-

խաղան նրա համար. բայց Նախախնամութիւնը ուրիշ կերպ փոխեց այդ բանը:

Եսթեր թագուհին՝ Մուրթքէի խրատելովը հրաւիրեց թագաւորին և Համանին իւր մօտ ճաշի՝ երեք անգամ, և վերջին անգամին յայտնեց Արտաշէսին՝ Համանի դաւաճանութիւնը գէպի ինքը և իւր ազգը:

Թագաւորը բարկացաւ Համանի վրայ, և հրամայեց կախել նրան իւր պատրաստած կախաղանիյը, և յետ առաւ Հրէից կոտրելու համար տուած հրովարտակը:

44.

ՄԱԿԵԴՈՆԱՅԻՈՅ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

Երբ որ Աղէքսանդր Մակեդոնացին տիրեց Պարսից, գնաց Երուսաղէմի վրայ, այն ժամանակ Յադդոս քահանայապետը հագաւ քահանայապետական զգեստը, իսկ

քահանայք և Ղետացիք սպիտակ զգեստներ, և այսպիսի հանդիսով գնացին աշխարհակալի առաջը: Աղէքսանդր բոլորովին փոխուեցաւ այս աեսարանով, իջաւ երիվարից և երկրպագութիւն տուեց Աստուծոյ, որի անունը գրած էր քահանայապետական խոյրի վրայ, և ասաց իւր մեծամեծներին, թէ «ինքը Մակեդոնիայում տեսիլքի մէջ տեսած էր այսպիսի անձն, որ խռոտացել էր իրան Պարսից յաղթելը:» Յետոյ խաղաղութեամբ մտաւ Երուսաղէմ, զոհեց Աստուծոյ Տաճարում, Քահանայապետը կարդաց Պանիէլի մարգարէութիւնը նրա տիրապետութեան մասին: Աղէքսանդր հրաման արաւ Հրէից, որ հաստատ պահեն ֆրանց հայրենի օրէնքը և Աստուածպաշտութիւնը:

Սամարացիք էլ նրա հրամանով շինեցին առանձին Տաճար Պարիզի լեռան վրայ, և կարգեցին առանձին Քահանայապետ և քահանաներ:

Աղէքսանդրի մահից յետոյ Եգիպտացւոց

Պաղոմէսս թագաւորը տիրեց Պաղեստինին և մինչև հարիւր հազար (100,000) Հրէայ և Սամարացի գերի տարաւ Եգիպտոս, ուր մնացին նրանք հարիւր տարի, և խաղալ կեանք էին անցկացնում։



45.

ԱՍՏՈՒԾԱՇՆՉԻ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆԸ։

Եգիպտացւոց թագաւոր Պաղոմէսս ք. Փիղագեղիսսի (Եղբայրասէր) ժամանակ թարգմանուեցաւ Ս. Գիրքը Եբրայերէնից Յունարէն, որ կոչվում է Եօնանանից Ռաբինանունի։

Պաղոմէսս ցանկանալով հարստացնել Աղէքսանդրիայի գրատունը՝ գրքեր ժողովեց ամեն տեղից, և կամենալով ունենալ նաև Հրէից օրինաց գիրքն ևս, գեսպան ուղարկեց Եղիպար Քահանայապետի մօտ, և ընծաներ Տաճարի համար։

Եղիպար ժողովեց Խորայէլի տասն երկու ցեղից վեց վեց մարդ, որոնք քաջ գիտէին Յունական լեզուն, ու յանձնեց նրանց Ս. Գիրքը և ուղարկեց Եգիպտոս։

Պաղոմէսս սիրճվ ընդունեց նրանց, և թարգմանելու տեղը նշանակեց Փարոս կըդզին, ուր Ս. Գիրքը թարգմանեցին Յունարէն, և Եգիպտոսում եղած Հրէաներին, բոլորին միասին ժողովեցին և նրանց առաջ կարգային Ս. Գրքի թարգմանութիւնը, որ ամենքն էլ հաւանութիւն տուին, ու դրին գրատան մէջ։

(Այս ընտիր թարգմանութիւնից է թարգմանուած, հայերէն լեզուով Աստուածաշունչը, սուրբ Սահակի ձեռքով և նրա աշակերտների օգնութեամբ):



ՀՐԵՒՅ ՎՐԱՅ ՀԱԼԱԾԱՆՔ ԵՒ
ՄԱԿԱԲԱՑԵՑԻՔ:

Հրէաները Սելևկիացւոց իշխանութեան ներքոյ ունեցան փոքր ժամանակ խաղաղութիւն, բայց Անտիոքոս Եպիփան, որ անօրէն ու արծաթասէր մարդ էր, մեծ հալածանք վերկացրուց նրանց վրայ. կողոպտեց Երուսաղէմ, այրեց լաւ շինութիւնները, քանդեց պարիսպները, ստիպեց ընդունել հեթանոսութիւն, դրեց Տաճարում Արամաղդի արձանը, արգելեց Աստուածազաշտութիւնը, Հրէից օրէնքները, ծէսերը, և շատերին սպանել տուեց: Այս հալածանքի ժամանակ նահատակուեցաւ դառն տանջանքներով Եղիսաբար քահանայն իննսուն տարեկան ուսեալ և առաքինի անձը, և Նամունէ անունով կինը՝ իւր եօթը որդով օրէնքը չմերժելուն համար:

Աստուած, որ միշտ պաշտպանել ու պաշտպանում է իւր եկեղեցին, չը թողեց

որ բոլորովին ընկնի, այլ յարոյց Մատաթիայ քահանային, Մակաբայեցւոց տան աղպապետին, որ վահուած օրինաց նախանձով՝ քանդեց կուռքի սեղանը, սպանեց նրա վրայ խունկ ծգող Հրէային, ձայն տուեց ժողովրդ եան. «ով որ օրինաց պահպանող է՝ իմ ետևիցս գայ»:

Հաւատի սիրոյն համար ժողովեցան շատերը և գնացին սարը, սկսաւ կրօնի պատերազմը: Ասորւոց զօրքը հասաւ նրանց ետևից Նաբաթ օրը, և սպանեցին Հրէանէրից հազար հոգի, որովհետեւ այդ օրը նոքա չը պատերազմեցին Նաբաթի պատճառաւ, և Մատաթիա վճռեց որ Նաբաթ օրը եւս պատերազմին: Ժողովեց նա կրկին զօրք և յաղթեց թշնամիներին, քանդեց կուտունները, թլփատեց երեխաներին, վերականգնեց օրէնքը և հայրենեաց ազտութիւնը: Մատաթիայի շուտ վախճանուիլը թէպէտ ընդհատեց Հրէաների յառաջադիմութիւնը, բայց նրա հինգ որդին՝ Յովհաննէս, Նմաւօն, Յուդայ—Մակաբէ, Եղի-

ազար և Յովնաթան կանգնեցան իրանց հօր
տեղը և մինչեւ ի մահ պաշտպանեցին ազգն
ու կրօնը:

47.

ՅՈՒԴԱՅ — ՄԱԿԱԲԵԻ ԵՒ ՆՐԱ ԵՂԲԱՑՐՆԵՐԻ
ՔԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

ՅՈՒԳԱՅ — ՄԱԿԱԲԵ իւր հօր մահից յե-
տոյ եղաւ կամաւոր զօրքի գլուխ։ Նա ան-
երկիւղ պատերազմեցաւ թշնամիների հետ,
սակաւաթիւ զօրքով յաղթեց Ասորւոց Պըտ-
զոմէոս Նիկանովրին և Գիօրգի Զօրավար-
ներին։

Անտիոքոս Եպիփան լսելով իւր Լիւսիաս
զօրավարի յաղթուիլը ՅՈՒԳԱՅ — ՄԱԿԱԲԵ-
ից, մեծ զօրքով եկաւ Հրէից վրայ, բոլորո-
վին ջնջելու մաքով. բայց Աստուծոյ պա-
տիժը շուտ հասաւ նրան, ճանապարհին
նա որդնալից սատակեցաւ։ Անտիոքոսի մա-

հից յետոյ պատերազմը շարունակվում էր
Ասորւոց և Հրէից մէջ, Յուղայ — Մակաբէ-
միշտ յաղթվում էր, բայց մէկ անգամ նա-
ութիւն հարիւր մարդով պատահեցաւ քսան-
երկու հազար Ասորի ընտիր զօրքի, աներ-
կիւղ պատերազմեցաւ, և մեծամեծ քա-
ջութիւն անելուց յետոյ ինքն էլ սպան-
ուեցաւ։

Նրան յաջորդեցին Յովնաթան և Նմաւոն
եղբայրները։ Յովնաթան մեծ օգուտ քաղեց
Ասորւոց թագաւորութեան մէջ ընկած խռո-
վութիւնից, և ցոյց տալով Դիմետր թագա-
ւորին օգնութիւն թշնամեաց դէմ՝ ստա-
ցաւ Քահանայապետութիւնը, իսկ Անտիո-
քոս վեցերորդից՝ Տիրանի և թագաւորական
նշան, բայց Տրիփոն բռնեց նրան նենգու-
թեամբ և սպանեց։

Նրա տեղը բռնեց Նմաւոն եղբայրը, որ
իւլեց Ասորւոց Ճեռքից Սիօն լեռը, և ստի-
պեց նրանց ճանաչել Հրէից ազգի անկա-
խութիւնը։ Նմաւոն ընդարձակեց և ամ-
րացրեց Հայրենիքի սահմանները, դրեց

գաշն Հռովմայեցւոց և Սպարտացւոց հետո:
Նրա կառավարութեան ժամանակ Հրէա-
ները վայելում էին ամեն կողմից խաղա-
ղութիւն։ Նրա որդին Յովհաննէս, մա-
կանուանեալ Հիւրկանոս, նուաճեց Գալի-
լիան, Սամարիան և Եղովմայեցիներին, սոփ-
ուեց նրանց ընդունել Մովսիսական օրէնքը,
և քտնդեց Գարիզինի Տաճարը։

48.

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՈՅ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ,

Հիւրկանոսի թոռները Հիւրկանոս թ. և
Արիստաբուղոս Ա. վիճելով միմեանց հետ
ծայրագոյն իշխանութիւնը միմեանց ձեռ-
քից խլելու համար՝ դիմեցին Հռովմայեցւոց
Պոմպէոս զօրավարին և խնդրեցին նրա օգ-
նութիւնը։ Պոմպէոս մտաւ զօրքով Երու-
սաղէմ, և Հրէաստանը շինեց Հռովմէական
նահանգ։ Հիւրկանոսին տուեց Քահանայա-

պետութիւնը առանց թագաւորական իշ-
խանութեան, իսկ Արիստաբուղոս և նրա
որդիքը շղթայակապ ուղարկուեցան Հռովմէ-

Մակաբայեցւոց ազգի ընկնելով՝ բարձրա-
ցաւ Հերովդէսի ցեղը։ Հերովդէսի հայրն
էր Անթիպատրոս, ազգով Եղովմայեցի, իսկ
հաւատով Հրէայ, որ իւր ցոյց տուած ծա-
ռայութեան համար Եղիպտոսում Յու-
լիոս Կեսարին՝ ստացաւ Հռովմէական քա-
ղաքացիւթիւն և բգեշխութիւն Հրէից
վրայ։

Հերովդէսի մահից յետոյ նրա որդին Հե-
րովդէս կարգեցաւ Հռովմի սենատից Հրէ-
աստանի թագաւոր։ Նրա երեսուն և չորս
տարուայ թագաւորութեան պատմութիւնը
լիքն է ահարկու չարագործութիւններով։
Հերովդէս իւր իշխանութիւնը աներկիւղ
անելու համար գործ գրեց ոպանութիւն։
Նա չը ինսայեց ոչ ժողովրդեանը և ոչ իւր
ազգականներին, և խեղդել տուեց իւր
աներորդի Արիստաբուղոսին, որին ինքն էր
կարգել Քահանայակետ։ Նաև սպանել

տուեց իւր հարազատ քրոջ մարդուն, յետոյ իւր գոքանչին և իւր կին Մարիամին, որ Մակաբայեցւոց վերջին ժառանգն էր, և նրանից ծնած իւր երկու որդիքը: Ապա տեսնելով որ ժողովուրդը ատում է իրան, և կասկածելով որ չը լինի թէ ապօստամբութիւն ծագի՝ ամենին խաղաղացնելու համար, վերանորոգեց Զօրաբարելի շինած Տաճարը շատ փառաւոր շենքով:

Հերովդէսի թագաւորութեան վերջին տարիներում, արդէն մօտեցել էր ժամանակը, որ պիտի ծնէր խոստացեալ ՄԵԿԱՅՆ, ՀԵԹԱՆՈՍՆԵՐԻ ակնկալութիւնը. Հրէից կամ ժամանակագրաց հաշւով աշխարհի ստեղծուելուց չորս հազար (4000), ըստ այլոց հինգ հազար չորս հարիւր ութ, (5108). և ըստ եօթանանից հինգ հազար հարիւր հիննուն ինն (5199). տարուց յետոյ:



49.

ՄԱՐԴԱՐԷՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒԹ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ:

Ա. Գիրքը մարդարէ անունը տալիս է նորանց, որոց ձեռքով Աստուած ինքը յայտնում էր մարդկանց իւր սուրբ կամքը:

Արանք ընդհանրապէս խստակրօն կեանք էին անցկացնում և շատ անգամ անօրէն ու ամբարիշտ մարդկանց ձեռքով հալածվում էին ու շատ նեղութիւններ էին քաշում: Արանց պաշտօնն էր Աստուածոյ կամքը յայտնել ժողովրդեան, և նրանց կրթելու Աստուածային պաշտամոնքը կործանելու վտանգից ազատել. Աստուածային օրինաց և փառացը սաստիկ նախանձախնդրութեամբ՝ ժողովրդեան և իշխանների անկարգութեանց դէմ Աստուածոյ սպառնակարգութեանց կոչմ Աստուածային վսեմ խորհուրդներն նկարագրել: Արանք այս պաշտօնին կոչվում էին ուղղակի Աստուածային կոչմ Աստուածային վսեմ խորհուրդներն նկարագրել:

սուածանից և կամ Աստուծոյ կողմից մի ուրիշ մարդու ձեռքով, սրա հետ միասին հրաշք գործելու պարզեն էլ ընդունում էին։ Նրանց այս բոլոր պարտաւորութիւնները, միանգամից չէին տրվում, այլ ամեն մինին ժամանակի և հանգամանքների պահանջման համաձայն և հետզհետէ։ Սրա համար էլ Ս. Գիրքը մարդարէների գարը երեք ժամանակի է բաժանած։

Ա. Աշխարհիս ստեղծուելուց մինչի Մովուէս Մարգարէն։

Բ. Մովսիսից մինչի բաբելացւոց գերութիւնը։

Եւ Գ. Բաբելացւոց գերութիւնից մինչի Քրիստոս։

Առաջին ժամանակուայ մարդարէներն են, Ադամ, Ենովք, Ղամեք, Աքրահամ, Իսահակ, Յակոբ և Մովսէս։

Երկրորդ ժամանակուայ մարդարէներն յեւան և վեց են, սրանցից միայն տան և վեցը Աստուծոյ՝ կամքը մարդկանց վրայ կատարելու բարձր խորհուրդները գրեցին։

Թրանց բոլոր գրածներն մարդարէութիւն են ասվում։ սրանք էլ մեծու փոքր են բաժանուած։

Մեծերը չորս են, Եսայի, Երեմիա, Եղեկիէլ և Դանիէլ, որ մեծ գրծուածքներ ունին։

Փոքրերն տամներկու են՝ Յովնան, Ովսիա, Ամովս, Յովիէլ, Միքիա, Նաւում, Սովոնիա, Սմբակում, Աբդիա, Անգիա, Զաքարիա և Մազաքիա, որ սակաւ գրուածք ունին։

Բացի սրանցից կ մն նաև մի քանիսը որոնք իրանց գործքերով երեւելի են, ինչպէս՝ Սամուէլ, Եղիա, Եղիսէ, Նաթան՝ որ թագաւորական տան վերատեսութ, Յովոմնի դաստիարակը և թագաւորաց պատմութիւնները գրողն է։

Բացի քահանաներից, մարդարէներն եւ ուսուցչութիւն էին անում։ Սրանցից առաջին դպրոց բացանողն եղաւ՝ Սամուէլ, որ զանազան տեղերում գպրոցներ հաստատեց և բոլորին ինչն էր ուղղութիւն տալիս։ Սրա ժամանակ ամենից երեւելի գպրոցներն

Հաստատուած էին Կարիաթարիմում, Երիքովում. Աամաթում, Բեթելում, և Գաղգաղյում:

Սրանք այնպիսի դպրոցներ էին, որոց մէջ սովորեցնում էին մանուկներին կրօնի օրէնսգիտութիւն. բանաստեղծութիւն և երաժշառութիւն, և վարժութեան համար բանաստեղծական հոգեոր երգեր էին շարադրում ու նուագարանով երգում էին: Այս դպրոցներում ուսանողներին մարգարէների որդիք, կամ աշակերտներ էին անուանում:

Երրորդ ժամանակուայ մարգարէների մէջ, ամենից երեւելին Յովհաննէս Մկրտիչն էր, որ մարգարէ Աստուծոյ բարձրելոյ և մարգարէներից ամենից մեծը կոչուեցաւ, սաստիկ խստակրօն կեանք անցկացրուց, որ և Քրիստոսի չէ թէ գալը՝ այլ եկած լինելը քարոզեց:

Մարգարէներն, նաև ժողովրդոց վարքի ուղղութեան օգտակար խրատներ էին տալիս, սովորեցնում էին որ մեղաց մէջ լի-

նողը, արտաքին ձեւերով Աստուծոյ համոյ չի կարող լինիլ, այլ մեղաց թողութիւն գտնելու համար պէտք է որ մարդս ապաշխարէ, ինքն իրեն հաստատ ուղղէ, և թէ մեղանչելուց յետոյ՝ իւր առաջուաց առաքինութիւնները բնաւ չեն կարող օգնել մարդոց:

Մարգարէները քարոզում էին գալու Փրկչի գործերը, նրա թագաւորութիւնը, յաւիտենական խաղաղութիւնը, և զանազան աղգերի՝ մի ճշմարիտ Աստուծած պաշտելու մէջ միաբանուիլը:

ՀՐԵՒՑ ԱԿՆԿՈԼՈՒԹԻՒՆԸ:

Ամեն մի ճշմարիտ Աստուծապաշտ պարզ Մէսէպպէ խոստման յիշատակով ինքն իրան մեծ մսիթարութիւն էր զգում:

Յակոր իւր մահուան անկողնի մէջ, իւր որպէսցը՝ բոցի Փրէն խոստացած լինելը

մոտաբերելուցն, ուրիշ ոչ մի միսիթարական
իւսուք չը կարողացաւ ասել:

Մովսէս՝ միսիթարում էր իւր ժողովրդ-
գետնիր՝ որ իրանցից պիտի յարուցանեւ Աս-
տուած աշխարհիս Փրկիւը:

Դաւիթ՝ երբ իմացաւ որ Փրկիւը իւր զա-
ւակներից պիտի ծնուի, ուրախութեամբ
որտի Աստուածանից շնորհակալութեան ա-
զօֆթք էր մոտուցանում:

Եսայի քանի անգամ որ մարգարէական
հոգւով գալու Փրկիւ վրայ էր իսոսում ժո-
ղովրդեան, նրանց յորգորում էր որ ուրա-
խանան ու միսիթարուին:

Վերջապէս որչափ որ խոստման կատար-
ուելու ժամանակը մօտենում էր, այնչափ
էլ Փրկիւ գալստեանը՝ մեծ փափագով ու ե-
ռանդով ոպասում էր ժողովուրդը:

Բայց վերջին ժամանակներում երբ իշխա-
նութեան գալազանը Յուգայի տանից վերա-
ցաւ, այն ժամանակ նոյն իսկ ամբարիշտ Հրէ-
տաներն ևս սկսեցին Փրկիւ գալստեանը սպա-
ռել, բայց չէ թէ՝ իրանց մեզքից ու մոլու-

թիւններից ազտուելու համար, այլ կարծում
էին թէ, Փրկիւը կը գայ աշխարհային փառ-
քով, և իրանց Հերովդէսի ու Հռովմայեցւոց
բռնութիւններից կազատէ: Հրէայք որ աշ-
խարհի փսռոքով ու սիրով լդուած էին, Ս.
Գիրքն ևս իրենց աշխարհասէր սրտի համե-
մատ էին մեկնում, և կարծում էին որ
Փրկիւը աշխարհիս թագաւորութիւնները
զէնքի զօրութեամբ պիտի նուածէ, ու
իրանց թագաւորութիւնը վերանորոգելով՝
վերին աստիճանի փառաւորութեան պիտի
հասցնէ իրանց:

Բայց նրանց ակնկալութեան հակառակ՝
վերջապէս եկաւ հասաւ այն երջանիկ ըո-
պէն. ուղարկեց Աստուած՝ Աղամի անկման
ժամանակ խոստացած Փրկիւը, որ իւր երկ-
նաւոր Աթոռից իջաւ, ծառալի կերպարանք
ընդունելով՝ ազատեց մեզ մեղքից և սա-
տանայի գերութիւնից, և Աստուածոյ որդի
և երկնքի արքայութեան ժառանգ արաւ:

մանուկը։ Անուանակոչութեան օրը, երբ
մօրը չէին լսում և հօր անունը որդուն
էին կամենում տալ, Զաքարիա տախտակ
խնդրեց ու գրեց թէ «Յովհաննէս է գրա
անունը» և իսկոյն նրա լեզուն բացուե-
ցաւ, և զարմացան ամենքը։ Յովհաննէս
անապատում բնակուեցաւ, մարախ և վայ-
րենի մեղրով կերակրուեցաւ, բրդեղէն ու
կաշի հագաւ։ Երբ երեսուն տարեկան դար-
ձաւ, Յորդանանի ափերում սկսեց քարո-
զել Քրիստոսի յայտնուիլը, և երկնքի ար-
քայութեան մօտենալը, և տալիս էր ապաշ-
խարելու հարկաւոր խրատներ, իւր մօտ
եկողներին մկրտում էր. մինչեւ որ շատերը
կարծեցին թէ մարդարէների գուշակած
Մէաֆայն նա է։

ՄԱՍՆ Բ.

ՆՈՐ ԿՇԵՎԱՐԱՎԵԼՅ

Պ. ԳԱՅՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՈՒԽՏԻ ԵԿԵՂԵՑԻՈՆ

1.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ։

Մեսիայն աշխարհ չեկած, ծնաւ նրա Կա-
րառեալ ամուլ ծնողներից, բարեպաշտ Զա-
քարիա քահանայից և Եղիսաբէթից, Գաբ-
րիէլ հրեշտակապետի աւետելովը։

Մէկ անգամ՝ Զաքարիա իւր հերթին երբ
Տաճարում խնկարկութիւն էր անում,
սեղանի աջ կողմում երևեցաւ նրան յան-
կարծ Գաբրիէլ հրեշտակապետը և աւետեց
Յովհաննէսի ծնունդը։ Զաքարիա իւր և իւր
կնոջ ծերութեան պատճառով չը հաւատաց,
և հրեշտակից պատժուեցաւ, և պապան-
ձուած մնաց մինչև Նիզոսաբէթ ծնեց իւր

2.

ՄԵՍԻԱՅԻ ԳԱԼՈՒԽՏԸ ԵՒ ԱՍՏՈՒԱՆՈՐԴԻՈՅ
ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ:

Մեսիայն եկաւ տշխարհ մարգարէների
գուշակութեանը համեմատ, որ ինքն էր
Ամենասուրբ երրորդութեան մի տնձը, այն-
չափ սիրեց մարգուն որ ինքը մարդ եղաւ
մոլ համար. Ա. Մարիամ կուսիյ առաւ
մարմին, հոգի և միտք և ամեն բան, ինչ որ
մարդո ունի, բայց մեղքից:

Յիսուս քրիստոս, Յուդայի ցեղից և
Դաւթի ազգիցն էր, Աստուածորդուոյ մար-
դեղութեան խորհուրդը կատարուեցաւ Ա.
Հոգւոյ զօրութեամբ: Եղիսաբէթի յղու-
թեան վեցերորդ ամիսը Գաբրիէլ հրեշտակը
Աստուծոյ հրամանով եկաւ Գալիլայի նա-
զարէթ քաղաքը Մարիամ կուսի մօտ, որ
Դաւթի տանիցն էր և Յովսէփի հետ նշան-
ուած, որին աւետեց Մէսիայի ծնունդը.
Թէպէտ Մարիամ կոյս շփոթուեցաւ այն
խօսքի վրայ, բայց հրեշտակն երբ առաց «Ա.

Հոգին կգայ քո վերայ»: Հնազանդուեցաւ,
և նոյն ժամին յղացաւ. Յովսէփ տեսնելով
նրան յղի, ընկաւ կառկածի մէջ. սակայն
Տիրոջ հրեշտակը տեսլեան մէջ ասաց. թէ
նա յղացած է Ա. Հոգւով, և թէ Մարիամ
երբ ծնի՝ մանկան անունը Յիսուս գնէ, որ
ժարգմանի Փիլի:

3.

ԱՍՏՈՒԱՆՈՐԴԻՈՅ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ԾՆՈՒՆԴԻ:

Յիսուսի ծննդեան ժամանակ Հրէաներն
էին Հռովմայեցող իշխանութեան ներքոյ. Օ-
գոստոս կայսրը հրամայեց տշխարհագիր ա-
նել իւր թագաւորութեան մէջ գտնուած
բոլոր բնակիչներին: Յովսէփ Մարիամի հետ
գնաց իրենց հայրենի Բեղզէչէմ քաղաքը
գրուելու աշխարհագրում. Մարիամի ծնե-
լու ժամանակը լրացած էր և ծնաւ Յիսու-

սին¹⁾), Յունվարի վեցին մի այրի մէջ, զո՞ր պատեցին խանձարուրում, և դրին մասւրի մէջ, որովհետեւ օտարականներով լցուած էր քաղաքը, և կենայու տուն չը կար: Այս ժամանակ Հրէից թագաւորն էր Հերովդէս:

4.

ՀՈՎԻԻՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ:

Յիսուսի ծննդեան գիշերը Աստուծոյ Հրեշտակը երեւեցաւ այն տեղում մօտիկ գտնուող Հովիւներին՝ որ գիշերով պահում էին իրենց հօտը, և աւետեց նրանց Փէնք ծնունդը. նրանք զարհուրեցան, Հրեշտակը

(1) Սկզբում բոլոր քրիստոնեայ ազգերը տօնում էին Յիսուսի ծննդեան Տօնը Յունվարի 6 ին. յետոյ Ոսկերերան հայրապետի ժամանակ փոխեցին Դեկտ. 25 ին, բայց Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցին այս տօնակատարութիւնը անփոփոխ պահպահ:

նրանց նշան տալով ասաց որ, ճանկանը կը գտնէք խանձարուրում պատած և մնրում դրած:

Հովիւները տեսան և ուրիշ հրեշտակների բազմութիւն, որ օրհնում էին Աստուծուն և ասում. — « Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն »: Երբ հրեշտակները վերացան, հովիւները բաջալերուած գնացին Բեթղեհէմ, մտան այրը և գտան մանուկը ու երկրպագութիւն տուին:

5.

ՅԻՄՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՌԻԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ
ԵՒ ՏԵՍԱՆՑՆԴԱՌԱԾ:

Յիսուսի ծննդեան ութերորդ օրը, ըստ օրինաց թլփատելով, նրա անունը գրին Յիսուս, ինչպէս Հրեշտակը պատուիրած էր Յովսէփին տեսիլքում. և քառասներորդ

օրը, Մարիամ՝ կոյս և Յովոնէփ տարան Յիսուսոին Տաճարը, ուր Սիմէոն ծերունին, որին հրեշտակը ասել էր, որ չի մեռնի մինչև որ իւր աշքով տեսնի տիրոջ օծեալը, Ա. Հոգւոյ ազգեցւթեամբ եկաւ Տաճարը, առաւ երեխային իւր գիրկը չնորհակալ եղաւ. Աստուածանից, օրհնեց մանկանը, և ինդրում էր կեանքից արձակում։ Նոյնպէս 84 ամեայ այրի Աննա կին մարգարէն ևս Տաճարում գտնուելով՝ Յիսուսին տեսնելու համար շատ ուրախացաւ և Աստուծոյ փառք տուեց։

6.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԳԻՊՏՈՍ
ՓՈԽԶԻԼԸ:

Յիսուսի ծննդեան ժամանակ մի նոր և անսովոր աստղի առաջնորդութեամբ որ երեաց արեւելքում, երեք մոգեր եկան նեղդէ հէմ նրան երկրագութիւն տալու, երբ

գտան նորածին մանկանը աստղի առաջնորդութեամբ՝ այրի մէջ մօր գրկում, երկրագութիւն և լնծաներ տուին, ոսկի, կընդոււկե զմուռ. ու յետգարձան իրանց տեղը առանց Հերովդէսին յայտնելու մանկան ծննդեան տեղը՝ որոնց պատուիրած էր իրան էլ յայտնել։ Որովհետեւ Հերովդէս լսելով մոգերից թէ Հրէից նոր թագաւոր է ծնել, որին երկրագուելու եկած էին, և երկիւղ կրելով որ չը ինի թէ մանուկը զօրանայ ու խլէիւր թագաւորութիւնը, հրամայեց կոտոսորել Բեթղէհէմի գաւառի բոլոր երկուարեկանից փոքր՝ երեխաներին, կարծելով թէ Յիսուսն էլ նրանց հետ կսպանուի. սակայն Յովոնէփ, հրեշտակի խօսքով, վեր առաւ Մարիամ՝ կուսին և մանկանը ու փախաւ Եգիպտոս, ուր մնաց մինչև Հերովդէսի մահը, և յետոյ գարձաւ Գալիլիայ։

Յիսուսի մանկութեան ժամանակ պատահած նշանաւոր գործողութիւնները սրբանք են։

1. Նրա հրաշալի ծնունդը. հովուաց և

մոգաց երկրպագութիւնը։ 2. Ութօրեայ թլիատութիւնը, 3. Քառասնօրեայ Տաճար գալը, 4. Բեթղեհէմի կոտորածից ազատութիւնը, և 5. Տասներկու տարեկան ժամանակ Տաճարում վարդապետելը և շատերին զարմացնելը։

7.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՏԱՃԱՐՈՒՄ
ՎԱՐԴԱՊԵՏՆԵԼ:

Յիսուս երբ տասներկու տարեկան դարձաւ իւր ծնողների հետ Զատկի տօնին Երուսաղէմ գնաց։ Երբ յետ էին դառնում՝ նու այնտեղ մնաց. Մարիամ և Յովեփի կարծում էին թէ իրանց աղքականների հետն է, ու շատ չէին մոտածում, բայց մի օրուայ ճանապարհ գալուց յետոյ, նրան ոչ մէկի մօտ չը գտան։

Յովեփի ու Մարիամ Յիսուսին չը գտնելու պատճառով շատ վշտացած՝ կրկն Երու-

սահէմ դարձան, ու երեք օր պտուելուց յետոյ՝ Տաճարում գտան, որ դպիրների և Ռաբբինների մօտ նստած նրանց լսում էր, ու նրանց հարցեր էր տալիս, մինչեւ որ նրա իմաստութեան վրա զարմանում էին։ Յիսուս իւր ծնողների հետ նազարէթ դարձաւ։

8.

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ, ՊԱՀՔԸ,
ՄԱՏԱՆԱՑԻՑ ՓՈՐՉՈՒԽՆԵԼ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ
ՄԱՀԸ:

Յիսուս երեսուն տարեկան հասակում՝ Զաքարիայի որդի Յովհաննէսից Յորդանան գետում մկրտուեցաւ, և ջուրը սրբագործեց։ Մկրտուելու ժամանակ բացուեցաւ երկինք, Ա. Հոգին աղաւնու նման իշաւ երկնքից Յիսուսի վերայ և Հայր Առառած վկայեց վերևից՝ «Դա է իմ սիրելի

որդին, Որին Ես հաճեցայ»։ Յիսուս Մկրտ-
ուելուց յետոյ իսկոյն առանձնացաւ անա-
պատ, քառասուն օր ու գիշեր ծոմ պա-
հեց, և թոյլ տուեց որ սատանան գայ իւր
մօտ և փորձէ, որով օրինակ տուեց մեզ,
իւր շնորհօք սատանայի փորձութեանցը
յաղթելու։ Յիսուս սատանայից երեք կերպ
փորձուեցաւ։ Նախ՝ ասաց սատանան՝ որ
քարեր հաց փոխարկէ։ Երկրորդ՝ Տաճա-
րի աշտարակից ինքն իրան ցած ձգէ որ հա-
ւտան թէ Աստուծոյ որդի է։ Եւ երրորդ
խոստացաւ նրան աշխարհիս բոլոր հարըս-
տութիւնը աալ, եթէ իրան երկրպագու-
թիւն անէ։ Յիսուս խայտառակեց սատա-
նայի խորամանկութիւնը և իւր մօտից հե-
ռացրուց, ապա հրեշտակները մօտ եկան և
սկսեցին նրան ծառայել։

Ժամանակից յետոյ Յովհաննէս բանտարկ-
ուեցաւ Հերովդէսից նրան յանդիմանելու
համար, որ իւր եղբօր Փիլիփպոսի կին Հերով-
դիան ապօրինի կերպով իրեն կին առած
էր։ Հերովդիայի գուստը Հերովդիադան

իւր մօրից խրատուած՝ թագաւորից իւր
կաքաւելու պարզե Յովհաննու գլուխին
խնդրեց, անմիջապէս Յովհաննէս բանտում
գլխատուեցաւ և գլուխը իբրև պարզե
տուեց, որի աշակերտները թողեցին մարմի-
նը և եկան Յիսուսին աշակերտ եղան։

9.

ԱՌԱԲԵԼՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ՅԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՁՈՒԹԻՒՆԸ։

Երբ Յիսուս դարձաւ անապատից, ընտրեց
տասներկու աշակերտներ որոց անուն-
ներն են։

1. Արմեն—Պետրոս։
2. Անդրէաս նրա եղբայրը։
3. Յակոբոս Մեծ — Զերեթայի որդին։
4. Յովհաննէս նրա եղբայրը։
5. Փիլիփպոս։

6. Բարդուղիմէսս.
7. Թովմասս.
8. Մատթէսս.
9. Յակոբս փոքր — Ալփիան.
10. Թադէսս — Դէբէսս կամ Յուդայ.

(«Ն Ի Ա Հ Ե Խ Վ Ա Ր Ա Յ Ե ») :

11. Սիմեն Կանանացի.
12. Յուդա Խոկարիովտացի:

Եւ անուանեց առաքեալ որովհետեւ պիտի ուղարկէր բոլոր աշխարհ իւր Աւետարանը մարդկանց քարոզելու, փրկութեան և անապարհը ուսուցանելու, և ցոյց տալու նրանց թէ՛ ինքնէ Մէսիայն, այսինքն Աստուած մարդկանց հետ հաշտեցնողը: Քրիստոս իւր քարոզութեամբ սովորեցրեց մարդկանց, առաքինութիւն գործել, և հաւատալ, որ ինքն է Աստուծոյ որդին, և պատուիրեց միրտուիլ և սրբուիլ, արքայութեան ժառանգորդ լինելու համար:



10.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆ
Ո.Ո.Ա.ԶԻՆ ՏԱՐԻՆ:

Յիսուս իւր մօր հետ Գալիլիացւոց կանաքաղաքում՝ հարսանիք հրաւիրուած լինելով, այնտեղ առաջին հրաշքը գործեց ջուրը գինի փոխելով:

Զատկի տօնին գնաց Երուսաղէմ, և տեսւ սր Աստուծոյ Տաճարին վայելուչ յարգանք չէին տալիս և շինել էին առուտուրի տեղ, առաւ չուանեայ խարազան, և քոլորին էլ տաճարից դուրս արաւ:

Յիսուս շրջեց իւր աշակերտների հետ Յուդայի զանազան կողմերը, և քարոզեց ամեն տեղ:

Գնաց Կափառնայում, բժշկեց հարիւրապետի որդին, և շատ ցաւեր և հիւանդութիւններ. և նրա համբաւը հռչակուեցաւ ամեն տեղ, բայց Փարիսեցիները նախան-

Ճելով խօսում և խորհում էին նրա համար չարութիւններ:

11.

ՅԻՍՈՒՍ ՔՐԵՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՆ:

Յիսուս՝ իւր քարոզութեան երկրորդ տարին կրկին գնաց երուսաղէմ, բժշկեց երեսուն ութ տարուայ անդամալոյծին Պրօպատիկէ աւազանի սրահում: Դարձաւ Գալիլիայ, շաբաթ օրը սովորեցնում էր Կափառնայումի մէջ. և բժշկելով մէկ մարդու գոսացած ձեռք՝ ցոյց տուեց Փարիսեցոց, թէ շաբաթ օրը բարի գործ անելը արգելուած չէ: Փարիսեցիք և կարդացողները այս տեսնելով շտա զայրացան, մինչեւ որ նրան կամենում էին սպանել: Յիսուս հեռացաւ մօտիկ սարը աղօթելու, շատ ժողովուրդ հետեւեցին նրան: Սարից երբ ցած իջաւ բժշկեց հիւանդներին, խօ-

սում էր իւր աշակերտների և ժողովրդեան հետ կենաց բանը:

Յիսուս կրկին դարձաւ կափառնայում, բժշկեց հարիւրազետի ծառային, նային քաղաքում յարութիւն տուեց մի աղքատ այրի կնոջ մեռած որդուն:

Քարոզութիւնից և զանազան հրաշքներից յետոյ մի անգամ երբ Յիսուս նաւով անցեր էր կենում Գալիլիայի ծովակի միւս կողմը, քնած ժամանակ՝ վերկացաւ սաստիկ քամի, ամենքը վախեցան. աշակերտները զարթեցրին նրան և օգնութիւն էին խնդրում: Յիսուս վերկացաւ, սաստեց քամուն և հանդարտուեցաւ. մտաւ Գերգեսացւոց երկիրը, բժշկեց դիւահարներին, յարութիւն տուեց Յայրոս ժողովրդապետի մեռած աղջկան, բժշկեց երկու կոյրեր նազարէթի ճանապարհի վրայ: Յիսուս մանէր գալիս Գալիլիացւոց քաղաքները և օգնում էր ամենքին, ոչ մէկ նեղացածի բացասութիւն չէր անում, այլ ամենին ցոյց էր տալիս կարեկցութիւն:

Յիսուս գնաց թէթսայիդայի անապատը,
հինգ հացով և երկու ձկնով հինգ հազար
հոգի կերակրեց, և հացի մնացորդը տաս-
ներկու քթոց լիքը աւելացաւ:

12.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆ
ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻՆ:

Քարողութեան երրորդ տարին, Յիսուս
սլառէքի ժամանակ գնացած էր Տիւրոսի
և Սիդոնի ծովի ափը. Մի քանանցի կին
դուրս եկաւ Քրիստոսի առաջ՝ խնդրում
էր որ բժշկէ իւր աղջիկը հիւանդութիւ-
նից: Յիսուս լսելով նրա ազազակը և տես-
նելով նրա հաւատը՝ ասաց. կի՞ն դու, մեծ
է քու հաւատը, թող լինի քեզ. ինչպէս
որ կամենում ես. և բժշկուեցաւ աղջիկը:
Յետոյ գնաց Գալիլիայի ծովի ափերում
եկած քաղաքները և բժշկեց շատ հիւանդ-

ներ, կաղեր, կոյրեր և խուլեր: Այս տեղ
եօթն հացով և մի քանի ձկնով կերակրեց
չոր սհազար հոգի՝ բացի կանայք ու երեխա-
ներն: Փիլիպպիայի Կեսարիա քաղաքում
յայտնեց աշակերտներին իւր մասին, թէ
մարդկային ազգը փրկելու եկել է, և առա-
ջուց պատմեց իւր չարչարանքը, մահը և
յարութիւնը:

13.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱԱՌԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ:

Յիսուս Քրիստոս առաւ իւր աշակերտ-
ներից Պետրոսին, Յակոբոսին և Յովհան-
նէսին, տարաւ թափօր սարը, ցոյց տուեց
նրանց իւր Աստուածային վառքը — լուսե-
ղէն գէմք ընդունեց, երեւցան նրան Մոլ-
սէս և Նղիա որ խօսում էին այն անցքե-
րի վրայ, որ պիտի պատահէին իւր հետ
Նրուազէմէւմ. և ահա ամպը հավանի ե-

զաւ նրան. ամպից ձայն լսուեցաւ. « Դա է իմ սիրելի որդին, Դրան լսեցէք »: Երբ սարից իջան, կրկին պատմեց աշակերտներին իւր չարչարանքը և մահը: Յիսուս կախունայումի մէջ տուեց իրանից պահանջուած հարկը, յանդիմանեց աշակերտներին որ վիճում էին մեծ լինելու մասին: Երբ Յիսուս Տաճարը եկաւ, սկսեց քարողել Տաճարումը. բարկանում էին Հրէաները, և ուզում էին քարկոծել, բայց նա հեռացաւ Տաճարից, և անցաւ Սամարիայ, ընտրեց եօթանասուն աշակերտներ, և ուղարկեց զանազան քաղաքներ, Աւետարանը քարողելու համար: Պատէքի չորրորդ օրը Յիսուս գնաց Երուսաղէմ, մտաւ փարիսեցի Սիմոն իշխանի տունը շաբաթ օր, բժշկեց ջրգողեալին: Այս ձանապարհորդութեան միջոցին բժշկեց տասն բորոտներ, և Բեթանիայում յարութիւն տուեց չարս օրուայ մեռած Դազարոսին, որով շատերը հաւատացին իրան:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵՐԿՐԻ ՎԵՐԱՅ:

1. Նա ոտքով ման եկաւ Հրէաստանի քաղաքները և քարողեց:

2. Չունէր հաստատ բնակարան, այլ ինչ տեղ մթնում էր՝ այն տեղ էր կենում, թէ շինութեանց մէջ, թէ անապատներում և թէ լեռներում:

3. Խղճում էր հիւանդներին և մեղաւորներին՝ ամենքի վրայ առհասարակ գութ ունէր, և չէր զզվում մեղաւորների հետ հաց ուտելուց:

4. Նա գնում էր հրաւերներ, ինչպէս կանայ Գալիլիացւոց հարսանիքը, և Մատթէոս մաքսաւորի և Սիմոն բորստի տունը:

5. Անդադար քարողում էր հրապարակներում, տներում, լեռների վրայ, անապատում և ծովի վրայ. իսկ շաբաթ օրերը գնում էր Հրէից ժողովարանը, քարողում և մեկնում էր Ս. Գիրքը:

6. Հանգստութիւն չունէր ժողովուրդի ծեռքից, այնպէս որ շատ անգամ չէր կարողանում հաց ուտել:

7. Ուսուցանում՝ էր իշխանութեամբ, և ոչ որպէս Հրէից ըարունիներն ու կարգադղներն:

8. Անաշառապէս նախատում՝ էր փարիսեցիներին, դպիրներին և օրէնտէտներին. և այս պատճառով նրանք չէին սիրում Յիսուսին:

9. Ժողովուրդի հետ խօսում՝ էր առակներով, ու առանձին մեկնում՝ էր իւր աշակերտներին:

10. Երկայնամտութեամբ համբերում՝ էր աշակերտաց տգիտութեան և փառասիրութեանը, և խրատում՝ էր նրանց:

11. Պարապ ժամանակ, մանաւանդ գիշերով միշտ, ու երբեմն մինչև անգամ արտասուք թափելով, աղօթք էր անում:

12. Համբերում՝ էր փարիսեցիների և կարգադղների անարգանացը, որ կոչում՝ էին իրան ուտող, արբեցող, զիւա-

հար, մեղաւորների և մաքսաւորների բարեկամ:

13. Սահմանեց այնպիսի օրէնք, որ յաւիտեան համեմատ են ժամանակի հանգամանքներին, և մարգութարոյական և կրօնական կեանքին:

14. Առում՝ էր աշխարհի փառքը, վայելցութիւնը և մեծութիւնը, և ամենին այն էր քարոզում. մանաւանդ իւր աշակերտներին:

15. Սիրում՝ էր Հրէից ազգը, Երուսաղէմքաղաքը, և լաց էր լինում նրա վրայ՝ տեսնելով նրա ներկայ և ապագայ թշուառութիւնները:



ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՑ
ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆԸ:

Յիսուս Քրիստոս մեր նախածնողաց սկզբունքական մեղքից մեզ ազատելու համար, եկաւ աշխարհ, յայտնեց իւր անձը քարոզութեամբ և վարդապետութեամբ, որով ուսուցանում էր մարդկանց որ ապաշխարեն, հեռու մնան մեղքերից. և փախչին ամեն տեսակ մոլութիւններից, բարի գործ գործեն, Աօտուծոյ կամքը կատարեն, միմեանց սիրեն, ամեն նեղութեանց համբերեն, վեր առնեն խաչը—չարչարան,՝ արդարութեան իւր համար և գնան ետեից:

Նա իւր Աստուածային անսահման կարօղութիւնը յայտնեց իւր հրաշագործութիւններով, բժշկում էր առանց գեղի և պատրաստութեան, շուտ՝ հրապարակում, բազմութեան տռաջ, հաւատացեալների, անհաւատների և թշնամիների ներկայու-

թեանը, հրաշագործութիւնները կատարում էր նա՝ միայն խօսքով:

Նա ջուրը գինի փոխեց, մեռեալներին յարութիւն տուեց, կուրերին լուսաւորեց, կաղերին ոտք, խուլերին լսել, համրերին խօսիլ տուեց, գեւերին հալածեց, հիւանդներին բժշկեց, ծովի վրայ գնաց ինչպէս ցամաքի վրայ, քամուն և ծովի ալիքներին սաստեց, երկու անգամ՝ սակաւ հացով հազարաւոր մարդկանց կերակրեց ելի:



ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՆԴԻՍՈՎ,
ԵՐՈՒՍԱԼԵՄ ՄՏՆԵԼԸ,

Յիսուս Քրիստոս մարդարէների գուշակութեան համաձայն իշով երուսաղէմ գնաց, քաղաք մտնելու ժամանակ բազմու-

թիւնը գնաց նրա առաջ՝ աղաղակելով. «Ովսաննա, Դաւթի որդի օրհնեալ որ գաս Աստուծոյ անունով, ովսաննա ի բարձունս»։ Ոմանք իրենց շորերը փառւմ էին ճանապարհի վերայ և ոմանք արմաւենւոյ և ձիթենւոյ ճիւղերը կտրառում և մատուցանում էին նրան. այդպիսի հանդիսով մոտաւ Տաճարը՝ դուրս արաւ բոլոր առուտուր անողներին, և այն երեկոյ գնաց մերձակայ Բեթանիա գիւղը։

17.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՌՀՐԴԱՆՈՐ
ԸՆԹՐԻԳԲԵ:

Բաղարջակերաց տօնի աւաջին օրը Յիսուս Երուսաղէմում իւր աշակերտների հետ գնաց մէկ վերնատուն, ուր պատրաստած էր Զատիկը, երբ նոտեցան սեղան՝ ոկսեց միխթարել և քարոզել նրանց, պատմեց ամեն անց-

քը, որ պիտի կրէր այն օրերումը և յայտնեց որ Յուղան իրեն պիտի մատնէ, լուաց ամենքի ոտները, տուլով հեղութեան և սիրոյ օրինակ, ապա առաւ հաց՝ օրհնեց, և տուեց աշակերտներին ասելով. « Առէք կրէք, այս է իմ Մարմինս »։ Նոյնպէս առաւ գինին գոհացաւ և ասաց. « Արբէք (խմեցէք) սրանից ամենքդ, այս է իմ նոր ուխտի Արիւնը. այս արբէք իմ յիշատակի համար »։ Ընթրիքը աւարտելուց յետոյ գնաց Զիթենեաց սարը։

18.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ :

Յւղա՝ խոստացել էր քահանայապետներին մատնել Յիսուսին նրանց ձեռքը երեսուն արծաթով. գիշերը մեծ բաղմութեամբ եկաւ Յիսուսի մօտ, երբ նա աղօթում էր Դեթումանի պարտիզում, և

Համբուրեց նրան՝ ասելով ողջ լեր վարդապետ. որովհեաւ մատնութեան նշան համբոյրն էր տուել: Բռնեցին Յիսուսին ու տարան քահանայապետի մօտ. իսկ աշակերտները թողին նրան ու փախան, միայն Պետրոս հեռությանում էր ետելից: Երբ հասան քահանայապետի մօտ, Հրէաներն սկսեցին սաստիկ չարախօսութիւն անել, հարցրեց քահանայապետը՝ «Դու ես Աստուծոյ Որդին»: Յիսուս պատասխան տուեց «Դու ասացեր, թէ ես եմ. և թէ, կրտեսնես Աստուծոյ որդւոյն նստած Հօր աջ կողմը»: այս խօսքի վրայ գուացին ամենքը՝ թէ մահապարտ է, սկսեցին նախատել և ծեծել նրան:

19.

ՊԻՎԱՏՈՒԻ ՎՃԻՌԸ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ:


Առաւօտեան տարան Յիսուսին Պիղատոսի մօտ: ամբոխը սկսեց չարախօսել նրանից.

թէպէտ Պիղատոս իմացաւ նրա անմէ զութիւնը և կամենում էր արձակել, բայց ժողովուրդը գրգռուած քահանայապետներից և կարդացողներից՝ աղաղակեց՝ «իաչ հանիր դրան, ապա թէ ոչ՝ ոտքի կը գանգնեցնէ ժողովուրդին բոլոր Հրէստան սկսած Գալիլիայից մինչի այս տեղ» Պիղատոս երբ լսեց թէ Յիսուս Գալիլիացի է՝ և Հերովդէսի իշխանութեան ներքոյ, ուղարկեց նրան Հերովդէսի մօտ: Հերովդէս երբ տեսաւ Յիսուսին ուրախացաւ, բայց Յիսուս լուել էր, և ոչինչ չէր խօսում: այն ժամանակ Հերովդէս անարգեց ու յետ ուղարկեց Պիղատոսի մօտ: Սա տեսնելով թէ ոչինչ չէ կտրողանում օգնել, այլ տւելի խօսվութիւն է ընկնում ժողովրդի մէջ, առաւ ջուր, լուաց ձեռները՝ ասելով. «այդ արդար մ բգու արիւնից ես աղատ եմ»: և նրանք աղաղակեցին. «Դրա արիւնը մեր և մեր որդւոց վրայ»: Ապա Պիղատոս հրամայեց խաչել:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ:

Այն ժամանակ Հրէաները պատեցին Յիսուսի չորս կողմը, որը ապտակում էր, որը խփում որը հայհոյում էր. Հագցրին կարմիր շորեր, և փշէ պոակ դրին գլխին, ու տարան Գողգօթայ տարը խաչեցին, և երկու աւազակներ էլ նրա աջ ու ձախ կողմը: Աջակողմեան աւազակը խոստովանեցաւ իւր մեղքերը և ստացաւ արքայութիւնը: Յիսուս խաչի վրայ աղօթում էր իրեն խաչողների համար, միիթարում էր իւր մօրը, տալով իւր փոխանակ նրան որդի՝ իւր սիրելի աշակերտ Յովհաննէսին: Յիսուս ջուր ուզեց, և տուին նրան քացախ ու լեզի: Օրուայ վեց (12) ժամից մութը բռնեց երկիրը մինչեւնն (3) ժամը. արեգակը խաւարեցաւ: Յիսուս տեսնելով որ տմեն բան կատարուած է, աղազակեց բարձր ձայնով՝ «Հայր, քո ձեռքդ եմ աւանդում հոգիս», և աւան-

գեց հոգին: Այդ ժամանակ շարժեցաւ երկիրը, ճաքճաքուեցան քարերը, տաճարի վարագոյրը վերևից մինչի վայր մէջ տեղից պատառուեցաւ, գերեզմանները բացուեցան, և շատ սրբոց մարմիններ յարութիւն առան, ու մտան սուրբ քաղաքը (Երուսաղէմ) և շատերին երեացին: Երբ զինւորներից մէկը գեղարդով ծակեց Յիսուսի կողքը, բղինեց արիւն և ջուր ի նշան նրա կենդանութեան և Աստուածութեան: Յիսուս Քրիստոսի Հոգին մարմնուց բաժանուեցաւ, բայց Աստուածութիւնը թէ Հոգուց և թէ մարմնուց անբաժան մնաց, Յիսուս հոգւով իջաւ դժոխք, աւերեց և գերեալ հոգիքը աղատեց և մենք նրա արեան գնով փրկուածներս պարտական ենք նրա անտանելի չարչարանքը միշտ մեր աչքի առաջ ունենալով լինել նրա շաւիզներին հետեւզ, մեր հոգւոյ և մարմնոյ օգակի և վրկութեան հտմար.



ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՈՒՄԸ:

Արեւաթացի Յովսէփի, որ ծածուկ Յիսուսի
աշակերտ էր, Պիղատոսի թոյլտուութեամբ,
Նիկոդիմոսի հետ. երեկոյեան դէմ խաչից
վայր իջուցին Յիսուսի սուրբ մարմինը, և
մաքուր կտաւով ու անուշահոտ խնկերով
պատեցին՝ ժայռի մէջ փորած նոր գերեզ-
մանի մէջ թաղեցին և գերեզմանի գուռը
մի քարով փակեցին, պահպանութեան հա-
մարմօտը զինուորներ թողին, որովհետեւ
Հրէայք աղաղակեցին Պիղատոսին այդ զգու-
շութիւնը անելու, որ չը լինի՝ թէ Յիսուսի
մարմինը աշակերտները գողանան ու յե-
տոյ ասեն ժողովրդեան թէ՝ յարութիւն
առաւ:



ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱԼԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ:

Յիսուս Քրիստոս մեռնելուց երեք օր յե-
տոյ Յարութիւն առաւ, գերեզմանից գուրս
ելաւ լուսապայծաւ կերպով։ Յարութեան
ժամանակ պահապանների վրայ սարսափ տի-
րեց, բայց հրէաներից կաշառք սաացան՝ որ
այդ հրաշալի համբաւը չը հրատարակեն։

Քրիստոսի յարութիւնը հրեշտակն աւե-
տեց նախ առաւօտեան վաղ գերեզման եկող
իւղաբեր կանանց, և պատուիրեց որ նրա
աշակերտներին իմաց անեն. ապա ինքն Յի-
սուս երեեցաւ լաց լինող Մարիամ՝ Մագ-
դաղենացուն, և իւղաբեր կանանց։ Սրանց
պատմելովը առաքեալները չը հստատացին.
Պետքո և Յովհաննէս անձամբ գնացին
գերեզման, երբ գերեզմանը դատարկ տե-
սան, տրտմած յետ դարձան, մինչև որ Յա-
րուցեալն Յիսուս քանից երեեցաւ աշա-
կերտաց։ Երբ նոքա միանգամ վերնատան

մէջ գոները փակտոծ միասին էին, բացի
Թովմասից, եկաւ Յիսուս նրանց ողջունեց
և ծանօթութիւն տուեց։ Թովմասին երբ
պատմեցին չը հաւատաց։ Ուժն օրից յետ
Թովմաս էլ նրանց հետ եղած ժամանակ՝ Յի-
սուս կրկին երեւեցաւ առաքեալներին, և
Թովմասի անհաւատութիւնը յանդիմանեց
և իւր վերքերը շօշափել տուեց։ մէկ ուրիշ
անգամ էլ Յիսուս Տիբերեայ ծովի մօտ երե-
ւեցաւ։ Սրանք ամենքն էլ, այդ ճշմարտու-
թիւնը հաստատելու համար, իրանց կեան-
քերը նուիրեցին, արիւնները թափեցին, ու
իրանց արած հրաշքներով՝ ճշմարտութիւնը
հաստատեցին ու աշխարհիս Քրիստոնէու-
թեան ծանօթ արին։

23.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ։

Քրիստոս Յարութիւն առնելուց յետոյ
քառասուն օր մնաց երկրիս վրայ, շուտ

շուտ առաքելոց երեսում և խրատում էր
նրանց, վերջին անգամ քառասներորդ օրը
առաքելոց տարաւ ձիթենեաց լեառը և
պատուիրեց Երուսաղէմից չը հեռանալ, մին-
չև որ խոստացած ու Հոգին ուղարկէ, որ
ուսուցանէ և յիշեցնէ այն ամեն բաները,
ինչ որ ինքը խօսել էր նրանց հետ։ Օրհնեց
և պատուիրեց գնալ ընդ ամենայն աշխարհ
քարոզել և մկրտել, խստանալով ցկատա-
րած աշխարհի՝ նոցա հետ լինել։ նրանց աչքի
առաջ՝ Եղիշներ համբարյառ, և Հօր աջ կողմը
նստաւ։

24.

Ս. ՀՈԳԻՈՅ ԳԱԼՈՒՍԸ, ԱԻԵՏԱՐԱՆԻ
ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՔԵԼՈՅ ԶԵՐՔՈՎ։

Քրիստոսի համբառնոլուց յետոյ տռա-
քեալները բռլորը միասին Երուսաղէմ գար-
ձան և սպասում էին Փրկչի խոստայած ու
Հոգւոյ գալստեանը, և Յուղ այի փոխարէն

վիճակով Մատաթիային ընտրեցին առաքեալ: Համբարձման տասներորդ օրը, որ է (Պենտէկոստէ) յիսներորդ օր Զատիկի, կէս օրից երեք ժամ առաջ. ս. Հոգին իջաւ վերնատան մէջ, սաստիկ քամի փշելու ձայնով և հրեղէն լեզուների ձեռվ, ուր ժողովուած էին առաքեալները, և ուրիշ հաւատացեալներ, բոլորը հարիւր քսան հոգի, նրանց մտքերը իմաստութեամք, սրտերը Աստուծոյ սիրով լցրեց, այլ և այլ լեզուներ խօսելու, հրաշքներ անելու շնորհք տուեց. այնպէս որ Պետրոսի առաջին և երկրորդ քարոզութեամբ. 5000 հոգի Քրիստոսին հաւատացին: Առաքեալք սկսեցին այնուհետեւ ս. Աւետարանը քարոզել, նախ՝ Հրէից և ապա հեթանոսաց, ինչպէս որ Քրիստոս իրենց պատուիրած էր: Առաքեալք մարդկանց այս Աւետիսն էին տալիս թէ Աստուած, Քրիստոսի միջնորդութեամք, հաշտուեցաւ մարդկային ազգի հետ, բայց Հրէից մեծ մասը ըլշաւատաց ու անդարձ մնաց: Ամենից առաջ Քրիստոս Աստուած դաւանողներից նահա-

տակուեցաւ ս. Ստեփաննոս եօմթը սարկաւագներից մէկը, որ Հրէից անհաւատութիւնը իրենց երեսներին էր տալիս: Երբ Հրէայք նրան քարկործումէին, նա քարկոծողների համար աղօթում էր, և նրանց մեղաց Աստուածանից թողութիւն էր խընդրում: Մրա մահուանը գործակից էր նաև Տարսոնացի Սաւուղը, որ յետոյ Պօղոս կոչուեցաւ: Հաւատացեալներից շատերը երկիւղ կրելով Հրէից հալածանքից, ցրուեցան Հրէաստանի և Սիրեայի կողմերը, ուր և տարածեցին քրիստոնէութիւնը: Փիլիպոս սարկաւագ մկրտեց Սամարացիներին. Երուսաղէմայ եկեղեցին ուղարկեց այն տեղ Պետրոսին և Յովհաննէսին, որ աղօթք անելով և ձեռք դնելով նրանց վրայ՝ ստատացան ս. Հոգւոյ շնորհքը: Նոյնպէս և ուրիշները հաստատեցին Դամասկոսում եկեղեցի:

25.

ՊՈՂՈՑԻ ԴԱՐՁԸ:

Դամասկոսի եկեղեցին բազմացաւ Պօղոսի դարձով։ Պօղոս սաստիկ պաշտպան էր Մովսիսական օրինաց, և հալածող Քրիստոսի եկեղեցուն։ Երբ գնում էր Դամասկոս քահանայապետի հրամանով՝ քրիստոնէութիւնը ջնջելու, յանկարծ ճանապարհին փայլապեց երկնքից նրա վրայ մի այնպիսի սառտիկ լոյս՝ որ նա սարսափեծ գետին ընկաւու կուրացաւ, լսեց երկնքից ահաւոր ձայն թէ՝ « Սաւուղ Սաւուղ, ինձ ինչի՞ ես հալածում », և կրկին լսեց. « Ես նազովեցի Յիսուսն եմ »։ Սաւուղ դողալով հարցրուց. « Տէ՛ր ի՞նչ ես կամենում որ անեմ »։ Յիսուս պատասխանեց. « Վե՛ր կաց, գնա քաղաք ինչ որ անելու ես. կասեմ »։ Սաւուղ վերկացաւ, աչքերը բաց ոչինչ չէ՛ր տեսնում, նրա ձեռքը բոնած Դամասկոս տարած, այնտեղ, նա երեք որ ոչինչ չը կերաւ,

շարունակ ազօթում էր։ Մտաւ նրա մօտ Յիսուսի աշակերտներից մէկը որի անունը Անանիա էր, Աստուծոյ հրամանով ձեռքը Սոզոսի աչքերի վրայ գրեց և խոկոյն բացուեցան, նա մկրտուեցաւ Անանիայից (37 թ.) և առաքելոց կարգը գասուեցաւ, ու բոլոր առաքեալներից աւելի եռանգույթ էր Քրիստոսի հաւատոր տարածելու մէջ, Աւետարանը քարոզեց և հրաշքներ գործեց։

26.

ԵԿԵՂԵՑԻՆ ԿԵՍԱՐԻԱՅՈՒՄ:

Պետրոս առաքեալ Յուղալէ քաղաքում, առանձին ազօթելու ժամանակ եղաւ նրան Աստուծածային յայտնութիւն հեթանոսներին գէպի քրիստոնէութիւն կոչելու, երկնքից կախուած կտաւէ զամբիւղի օրինակով, որ լիքն էր զանազան գաղաններով, անասուններով և թռչուններով, և երկնա-

յին ձայնը հրամայում էր Պետրոսին մորթել և ուտել: Հազիւ թէ աւարտուեցաւ տեսիլքը, երբ առաքեալը տեսաւ իւր մօտ երեք մարդիկ ուղարկուած Հռովմայեցի հարիւրապետ Կուռնէլիոսից, որ աստուածավախ ու բարեգործ մարդ էր, հրեշտակի խօսքով խնդրում էր Պետրոսից գալ կեսարիայ, որ լսէ նրանից հոգւոյ փրկութեան բանը: Ս. Հոգին Պետրոսին հրամայեց գնալ աներկիւզ, և երբ Պետրոս մտաւ Կուռնէլիոսի մօտ և սկսեց քարոզել Քրիստոսի տնօրէնութիւնները, և Յիսուս Քրիստոսով փրկութիւնը, ամենքն էլ լցուեցան ս. Հոգւով, և մկրտեց նրանց:

27.

ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՏԻՈՔՈՒՄ:

Երուսաղէմի Եկեղեցին լսեց որ Ստեփանոսի նահատակուելուց յետոյ մի քանիսը հաւատացեալներից, հալածանքից յըսւած-

ները՝ Անտիոքում Եկեղեցի են հիմնել, ուղարկեց Բառնաբասին, որ աւելացրուց այնտեղ հաւատացեալների թիւը և յետոյ Պօղոսի յետ միասին՝ մէկ տարի աշխատեցին կարգաւորել այս Եկեղեցին (39 թ.) և Անտիոքում ամենից առաջ ընկալան Քիոպոնէայ անունը:

28.

ՊՕՂՈՍ Ս.ՌԱՔԵԼՈՅ ՀԱՍՏԱՏԱԾ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ:

Անտիոքում Եկեղեցին հաստատելուց յետոյ՝ Պօղոս երեք ճանապարհորդութիւն արաւ և քրիստոնէութիւնը տարածեց: Առաջին ճանապարհորդութիւնը արաւ Բառնաբասի հետ (45 և 46 թ.) և հաստատեցին Եկեղեցիներ Կիպրոսի և փոքր Ասիայի նահանգների մէջ: Երկրորդ ճանա-

պարհորդութեան ժամանակ բաժանուեցաւ
նրանից Բառնաբաս: Պօղոս նախ այցելու-
թիւն արաւ իւր հիմնած եկեղեցիներին,
կրկին հիմնեց եկեղեցիներ Մակեդոնիա-
յում և Յունաստանում: Երրորդ ճանա-
պարհորդութեան ժամանակ՝ քարոզելով Ե-
փեսոսում երկու տարուց աւելի, տարա-
ծեց Աւետարանը Ասիայի քդեշխութեան
մէջ, և յետոյ այցելութիւն անելով եկեղե-
ցիներին՝ գնաց Երուսաղէմ (66 կամ 68
թ.) և հազիւթէ ազատուեցաւ Հրէաներից
ողանուելուց: Հռովմայեցւոց հազարավե-
տը ազատեց նրան մահից՝ և ուղարկեց Կե-
սարիոյ Փելիքս գատաւորի մօտ: Այսուղ
երկու տարի շղթայակատ մնաց բանտում,
և յետոյ Փիլիքսի յաջորդ Փետառ գատա-
ւորի առաջ՝ Ագիպպա թագաւորի ներկա-
յութեան՝ կայսեր բողոքեց: Պօղոս կոչուե-
ցաւ հեթանուների առաքեալ, հալածուե-
ցաւ, քարկուծուեցաւ, ծեծուեցաւ, բան-
տարկուեցաւ և աքսորուեցաւ, և վերջա-
պէս ներսն անօրէն թագաւորի ժամանակ

գլխատուեցաւ, 67 կամ 68 տարեկան հա-
սակում:


29.

ՄԻՒՍ ԱՌԱՔԵԼՈՅ ՀԻՄՆԱԾ ԵԿԵՂԵՑԻՔ
ԵՒ ՆՐԱՆՑ ՎԱԽԱՇԱՆԸ:

Միւս առաքեալները և եօթանասուն ա-
շակերտները ճանապարհորդութիւն արին
զանազան կողմեր Աւետարանը քարոզելու:
Պետրոս քարոզեց Հրէաստանում, Գաղա-
տիայում, Պոնտոսում, Փոխւգիայում, Կա-
պագովիայում, Պարսկաստանում, Ասո-
րեստանում, և Ներսնի ժամանակ գլխիվայր
խաչուելով մեռաւ, ինչպէս որ Քրիստոս ակ-
նարկած էր: Թագէսս հիմնեց եկեղեցիներ
Եղեսիայում և Հայաստանում: Մարկոս՝
Աղէքսանդրիայում, Թովմաս քարոզեց Պար-
թևաց, Մարաց, Պարսից և Հնդկաց: Ան-
դրէաս՝ Ակիւթացւոց: Բարդուղիմէս՝ Հա-
յաստանում: Այսպէս և միւսները տարա-

Առաքեալները՝ բացի Յովհաննէս աւետարանչից ամէնքն էլ մարտիրոսական մահուամբ մեռան, ու իրանց արիւնով հաստատեցին Քրիստոսի սուրբ եկեղեցին:

Յովհաննէս աւետարանիչը՝ Յիսուսի սիրելի աշակերտը, Ս. Աստուածածնի հետ Եփեսոսում մնաց, Փոքր Ասիայի եկեղեցիներին այցելութիւն արաւ, յետոյ Դոմետիանոսի հալածանաց ժամանակ՝ Պաղմոս կըդղին աքսորուեցաւ, ու սուրբ Հոգւոյ ազդեցութեամբ իւր Աւետարանը և Յայտնութեան գիրքը գրեց: Կրկին Եփեսոս դարձաւ, և մեռաւ խաղաղ մահւոամբ՝ Քրիստոսի ծնուելուց 100 տարի յետոյ:



Ճեցին ամեն տեղ քրիստոնէական հաւատը իրանց քարոզութեամբ, արիւնով և նահատակութեամբ: Բոլոր առաքեալներից առաջ նահատակուեցաւ տեառնեղբայր Յակոբոս փոքր՝ Երուսաղէմայ Եպիսկոպոսը, որ՝ Յիսուսի՝ Աստուածոյ որդի Աննելը հրապարակաւ խոստովաճուելու համար՝ Հրէպարիք Տաճարի աշտարակից ցած գլորեցի: Ու սպանեցին: Մատաթիա առաքեալը Երուսաղէմում քարկոծուեցաւ ու մեռաւ: Մատթէոս՝ Աւետարանը Հրէից և Եթովպացւոց քարոզեց, և սրով նահատակուեց: Բարդուղիմէոս Հայաստան՝ մորթազերծ եղաւ ու գլխատուեցաւ: Անդրէաս՝ Յունիաստանում խաչուեցաւ: Թովմաս՝ Աւետարանը Մարաց ու Պարթևաց քարոզեց, ու տիգսվ խոցուեցաւ և մեռաւ: Փիլիպպոս՝ Սկիւթացւոց և Փոխւգացւոց քարոզեց, քարկոծուեցաւ ու խաչուեցաւ: Աիմոն՝ ու Թագէոս առաքեալները՝ քրիստոնէութեան դրոշը մինչև Պարսկաստան հասցրին ու այսեղ նահատակուեցան, Այսպէս էլ բոլոր

ՅԱՆԿ ԲՈԼՈՐ ԳԼԽՈՅ.

Երես.

| | | | | | |
|---|----|----|----|----|---|
| 1. Աստուած | · | · | · | · | 1 |
| 2. Ա. Երրորդութիւն | · | · | · | 3 | |
| 3. Աշխարհի ստեղծումը | · | · | 4 | | |
| 4. Դարձեալ ստեղծագործութեան վրայ | · | · | · | 5 | |
| 5. Հրեշտակներ և դեեր | · | · | 7 | | |
| 6. Մարդիկ | · | · | · | 8 | |
| 7. Ագամ, Եւայ և նրանց մեղքը | · | 10 | | | |
| 8. Ագամի ու Եւայի պատիժը | · | 12 | | | |
| 9. Մեսիայի գալու խոստանալը | · | 13 | | | |
| 10. Մարդկանց վիճակը աշխարհի ստեղծուելուց մինչեւ ջրհեղեղը | · | 14 | | | |
| 11. Ջրհեղեղը | · | · | · | 16 | |
| 12. Աշտարակաշինութիւնը եւ լեզ- ուաց բաժանումը | · | · | 18 | | |
| 13. Կռապաշտութեան սկիզբը | · | 19 | | | |
| 14. Աբրահամի կոչումը | · | · | 20 | | |
| 15. Աստուծոյ ուխտը Աբրահամի հետ | 20 | | | | |
| 16. Աստուծոյ հիւր գալը Աբրահամի մօտ | · | · | · | 21 | |

| | | |
|--|----|----|
| 17. Սոդոմ—Գոմորի կործանումը | · | 22 |
| 18. Իսահակի զենումը | · | 23 |
| 19. Իսահակի ամուսնութիւնը և որ- դիքը | · | 24 |
| 20. Յակոբի Միջագետք գնալը և նրա որդիքը | · | 26 |
| 21. Յովսէփի վաճառուիլը | · | 28 |
| 22. Յովսէփը Եգիպտոսում | · | 29 |
| 23. Յովսէփի եղբայրների Եգիպտոս գալը | · | 31 |
| 24. Յակոբի Եգիպտոս գալը | · | 31 |
| 25. Յակոբի և Յովսէփի մահը և Իս- րայէլացւոց չարչարանքը Եգիպ- տոսում | · | 32 |
| 26. Մելքիսեդէկ | · | 34 |
| 27. Յովք | · | 35 |
| 28. Մովսէսի ծնունդը և փախուստը | 36 | |
| 29. Մովսէսի դեսպանութիւնը Փարա- ւոնի մօտ | · | 38 |
| 30. Իսրայէլացւոց ելքը — պատէքը. —Փարաւոնի կորուստը | · | 39 |
| 31. Տամն պատուիրանքները | · | 41 |


| | | |
|-----|--|----|
| 32. | Եկեղեցական և քաղաքական օրէնք | 43 |
| 33. | Քառասնամեայ ճանապրհորդութ. | 46 |
| 34. | Հրէից ազգի աւետեաց երկիր մոնելը և Յեսու նաւեան . . . | 48 |
| 35. | Դատաւորաց ժամանակ . . . | 51 |
| 36. | Հրէից ազգի առաջին թագաւոր- ները, Սաւուղ, Դաւիթ և Սովոմն | 56 |
| 37. | Յուղայի թագաւորութիւնը . . . | 60 |
| 38. | Իսրայէլի թագաւորութիւնը . . . | 62 |
| 39. | Իսրայէլացիք Բաբելացւոց իշխա- նութեան ներքոյ | 65 |
| 40. | Տօրիթ և նրա Տօրիա որդին . . . | 68 |
| 41. | Յուղիթ | 71 |
| 42. | Հրէաները Պարսից իշխանութեան ներքոյ | 73 |
| 43. | Եսթեր | 77 |
| 44. | Մակեդոնացւոց իշխանութեան ժամանակ | 78 |
| 45. | Աստուածաշնչի թարգմանութ. . . | 80 |
| 46. | Հրէից վրայ հալածանք և Մակա- բայեցիք | 82 |
| 47. | Յուղայ — Մակարէի և նրա եղ- բայրների քաջութիւնները . . . | 84 |
| 48. | Հռովմայեցւոց իշխանութեան ժա- մանակ | 86 |
| 49. | Մարգարէների մասին ընդհանուր տեղեկութիւն | 89 |
| 50. | Հրէից ակնկալութիւնը | 93 |

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՑ

Երես.


1. Յովհաննէս Մկրտչի ծնունդը 96
2. Մեսիայի գալուստը և Աստուած-
որդւոյ մարդեղութիւնը 98
3. Աստուածորդւոյ Յիսուս Քրիս-
տոսի ծնունդը 99
4. Հովհաննէրի երկրպագութիւնը 100
5. Յիսուս Քրիստոսի Անուանտկո-
չութիւն և Տեառնընդառաջ 101
6. Յիսուս Քրիստոսի Եղիպտոս փախ-
չիլը 102
7. Յիսուս Քրիստոսի Տաճարում վար-
դապետելը 104
8. Յիսուս Մկրտութիւնը, պահը,
Սատանայից փորձութիւլը և Յով-
հաննու մահը 105
9. Առաքելոց ընտրութիւնը, Յիսուս
Քրիստոսի քարոզութիւնը 107
10. Յիսուս Քրիստոսի քարոզութեան
առաջին տարին 109
11. Յիսուս Քրիստոսի քարոզութեան
երկրորդ տարին 110
12. Յիսուս Քրիստոսի քարոզութեան
երրորդ տարին 112
13. Յիսուս Քրիստոսի պայծառակե-
պութիւնը 113

14. Յիսուս Քրիստոս երկրի վերայ . 115
 15. Յիսուս Քրիստոսի հրաշագործութեանց համառօտութիւնը . 118
 16. Յիսուս Քրիստոսի հանդիսով երուսաղեմ մտնելը 119
 17. Յիսուս Քրիստոսի խորհրդաւոր ընթրիքը 120
 18. Յիսուս Քրիստոսի մատնութիւնը . 121
 19. Պիղատոսի վճիւք Յիսուսի համար 122
 20. Յիսուս Քրիստոսի խաչելութիւնը 124
 21. Յիսուս Քրիստոսի թազումը . 126
 22. Քրիստոսի հրաշալի յարութիւնը . 127
 23. Քրիստոսի հրաշափառ համբարձումն 128
 24. Ա. Հոգւոյ գալուստը, Աւետարանի քարոզութիւնը առաքելոց ձեռքով 129
 25. Պօղոսի գարձը 132
 26. Եկեղեցին Կեսարիայում 133
 27. Եկեղեցին Անտիոքում 134
 28. Պօղոս առաքելոյ Հաստատած Եկեղեցիները 135
 29. Միւս առաքելոց Հիմնած Եկեղեցիք և նրանց վախճանը 137



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Մանուկյան
Աշխարհագույն պատկերագիր



3145



ՀՀ Ազգային գրադարան



NL0030141

3058